

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒՄ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Սր Աստվածածնի Վերափոխման տոնը Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 18-ին Մայր Աթոռ Սր Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Սր Աստվածածնի Վերափոխման տոնը, որի առիթով մատուցվեց Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Սր Պատարագի ընթացքում սրբազան հայրը, անդրադառնալով տոնի խորհրդին, խոսեց Մարիամ Աստվածածնի առաքինի կերպարի մասին, որը սրբության ու մաքրության, խոնարհության ու հնազանդության լավագույն օրինակն է ընտանիքի, հայ կնոջ եւ առհասարակ հայ քրիստոնյայի համար:



Պատարագից հետո Մայր տաճարից եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Սր Տրդատի բաց խորան, ուր, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց խաղողօրհների արարողություն: Սր Ներսես Շնորհալի Հայրապետի աղոթքի ընթերցումից եւ շարականների երգեցողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խաղողն ու տարվա ողջ բերքը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունը բաշխեց ներկա ժողովրդին՝ մաղթելով, որ Աստված երկնային շնորհներ հեղի ամենքի վրա եւ բերք ու բարիքի առատության մեջ երջանիկ, ապահով ու անվրդով կյանք պարգևի:

Վերջում միաբան սարկավազներն օրհնված խաղողի ողկույզները բաժանեցին ժողովրդին:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 19-ին, մատուցվեց հոգեհանգստյան Պատարագ՝ ննջեցյալ հոգիների խաղաղության ու հանգստության համար:

Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական հանձնախմբի հանդիպումը

Օգոստոսի 28-29-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Ս. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի կողմից նշանակված Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական հանձնախմբի հանդիպումը, որին մասնակցեցին նախապատրաստական հանձնախմբի անդամներ Խաժակ արք. Պարսամյանը, Օշական արք. Զոլոյանը, Միքայել եպս Աջապահյանը, Նարեկ արք. Ալեմեյանը եւ սրբադասման ու ծիսական բարեկարգության հանձնախմբերի անդամներ Եզնիկ արք. Պետրոսյանը, Սեպուհ արք. Սարգիսյանը, Արշակ եպս Խաչատրյանը եւ Բաբկեն եպս Զարյանը:

Օգոստոսի 28-ին՝ չորեքշաբթի, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց ժողովական հայրերին եւ նրանց փոխանցեց իր օրհնությունները:

Երկու օրվա ընթացքում ժողովական սրբազան հայրերը քննարկեցին Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի գումարման թվականին, օրակարգին եւ ժամանակացույցին առնչվող հարցեր:

Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը տեղի կունենա 2013-ի սեպտեմբերի 24-27-ը Ս. Էջմիածնում՝ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Ս. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի օրհնությամբ եւ ներկայությամբ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

21 օգոստոսի

Երիտասարդական

կազմակերպությունների ներկայացուցիչներին

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սր Էջմիածին էր այցելել շուրջ 200 երիտասարդ՝ ծննդյան տարեդարձի առիթով շնորհավորելու Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ հավատարմություն, նվիրվածություն ու զորակցություն հայտնելու Հայ Եկեղեցուն: Երիտասարդները ներկայացնում էին Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորումը, Մայր Աթոռի քարոզչական կենտրոնը, Եկեղեցասեր երիտասարդներ կառույցը, բուհական երիտասարդական միությունները, Մայր Աթոռի «Մանասա» երիտասարդական-քրիստոնեական ծրագիրը, ինչպես նաեւ՝ «Սփյուռքահայ ուսանողների խորհուրդը», «Ռուսաստանի հայերի միության» եւ «Համաշխարհային հայկական կոնգրեսի» երիտասարդաց, «Սերունդ», «Երիտասարդություն», «Երիտասարդներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպությունները:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, ապա ՀԵԵՄ հոգեւոր պատասխանատու Եղիշե վրդ. Ավետիսյանը եկեղեցասեր երիտասարդների անունից շնորհավորեց Հայոց Հայրապետին՝ ծննդյան 62-րդ տարեդարձի առիթով: Երիտասարդական կառույցների ողջույններն ու բարեմաղթանքները Նորին Սրբությունը փոխանցեցին նաեւ տարբեր կազմակերպությունների պատասխանատուները: Այնուհետեւ հոգեւոր երգերի կատարումներով հանդես եկավ Նորաստեղծ «Հավատամբ» երգչախումբը:

Վերջում երիտասարդներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց երիտասարդներին՝ Հայ Եկեղեցու շուրջը համախմբվելու, Եկեղեցու հոգեւոր առաքելության իրականացմանն աջակից լինելու համար՝ արձանագրելով, որ ազգի շարժիչ ուժը՝ երիտասարդությունը, նախանձախնդիր է իր Եկեղեցու կյանքի նկատմամբ, հա-



վատարիմ՝ հայրերի սուրբ հավատքին ու ժառանգությանը, նվիրական սրբություններին ու ավանդույթներին: Նշելով, որ հայրենիքը զորանում, եւ Եկեղեցին փառավորվում ու պայծառակերպվում է, երբ աստվածահաճո կյանքով եւ ապրում ողջ ազգը, նրա բոլոր զավակները: Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդներին միշտ Եկեղեցու օրհնության ներքո մնալ եւ մասնակցից դառնալ Եկեղեցու առաքելությանը՝ ժողովրդին քրիստոնեական արժեքներով առաջնորդելու, նրա կյանքն այդ արժեքների վրա խարսխելու համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց երիտասարդներին իրենց աղոթքով, հավատով եւ գործերով միշտ պայծառ ու շեն պահել մեր Սուրբ Եկեղեցին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին, որոնք առնչվում են Եկեղեցու առաքելության իրականացման ճանապարհին երիտասարդների հնարավոր աջակցությանը, Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին ու դրանց հաղթահարման գործում երիտասարդության ներգրավվածությանը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Մայր Աթոռի կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը, երիտասարդական խմբերի պատասխանատուներ Երեմիա արք. Աբգարյանը, Թովմա արք. Խաչատրյանը, Հակոբ քնն. Խաչատրյանը եւ Գեղամ սրկ. Ավետիսյանը:

24 օգոստոսի

Ձիթրալթարի անգլիկան եպիսկոպոսին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Անգլիկան Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Ձիթրալթարի անգլիկան եպիսկոպոս Ջեֆրի Ռոուելի եւ ուղեկցությամբ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ, Աթրիկի թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանի:

Չրույցի ընթացքում Նորին Սրբությունը պատվիրակությանը ծանոթացրեց Մայր Աթոռի ներկայիս գործունեությանը, ինչպես նաեւ ընդգծեց Հայ Առաքելական Եկեղեցու կարեւոր դերակատարությունը հայ ժողովրդի ազգային-հոգեւոր կյանքում:

Շարունակությունը՝ էջ 2

Ջիրալթարի անգլիկան եպիսկոպոսին

Սկիզբը՝ էջ 1

Այնուհետև անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական եւ Անգլիկան Եկեղեցիների միջեւ հարաբերություններին, կարեւորվեց Եկումենիկ երկխոսությունների զորացումը, ինչպես նաեւ համատեղ ջանքերի գործադրումը՝ հանուն

արդարության հաստատման եւ մարդկության խաղաղ ու բարձր կյանքի կերտման:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջաստին Ուելքին:

27 օգոստոսի

«Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում Հայաստանի հաղթողներին եւ ՀՀ մարզերում ու Արցախում լավագույն արդյունքներն արձանագրած դպրոցականներին:



Մրցույթի կազմակերպիչ «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մեսրոպ քին. Արամյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց 2013 թ. «Կենգուրու» մրցույթի գրանցված գոհացուցիչ արդյունքները, ապա մրցույթի մասնակիցների եւ կազմակերպիչների անունից երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ամեն տարի ավանդաբար երիտասարդներին ընդունելու եւ իր հայրական պատգամը փոխանցելու համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավոր

րեց աշակերտներին՝ իր օրհնությունը բերելով նրանց այդ կարեւոր ձեռքբերումների առիթով:

Նորին Սրբությունը մրցույթի հաղթողներին հորդորեց առավել նախանձախնդրությամբ ու ջանասիրությամբ շարունակել գիտելիքների

ամբարելը՝ հայրենիքին ամուր հեւարան լինելու համար: Ապա անդրադառնալով ուսման կարեւորությանն ու անհրաժեշտությանը՝ Վեհափառ Հայրապետը դպրոցականներին պատգամեց պահպանել հայրերի կերտած դարավոր արժեքներն ու սրբությունները եւ որպես հայոց մշակույթի կրողներ՝ հարստացնել այն սեփական մտքի գեղեցիկ արգասիքներով:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց ծնողներին, մանկավարժներին եւ մրցույթի կազմակերպիչներին՝ գործադրած ջանքերի համար: Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց պատանիների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմությանն ու Մայր Աթոռի ներկայիս գործունեությանը:

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷԶՄԻՎՇՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՅԱՍԱՆԳԻ

Հայոց Եկեղեցու պատմությունն առարկայի օլիմպիադա



Օգոստոսի 9-15-ը Ճաղկածորում ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համագործակցությամբ կայացավ Համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադան, որին մասնակցեց ընդհանուր առմամբ 150 աշակերտ ՀՀ-ից, ԼՂՀ-ից եւ Սփյուռքի հայկական կրթօջախներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս տարի առաջին անգամ օլիմպիադայի շրջանակներում կազմակերպվեց նաեւ Հայոց Եկեղեցու պատմությունն առարկայի մրցույթ, որին մասնակցեց 54 աշակերտ:

Առարկայական օլիմպիադաներին մասնակցելուն զուգահեռ՝ օրակարգում նախատեսված էին ազգային պարի ուսուցում, պատմամշակութային թեմաներով դասախոսություններ, ինչպես նաեւ ուխտագնացություններ եւ այցելություններ ՀՀ տեսարժան վայրեր, որոնք իրականացան ԵՀԻ հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի աջակցությամբ:

Համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադայի եւ Հայոց Եկեղեցու պատմությունն առարկայի մրցույթի արդյունքներն ամփոփվեցին օգոստոսի 14-ին՝ մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառման ընթացքում:

Զրիստոնեական դաստիարակության կենտրոն



Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

Ա

Աղամորդիներից ո՞վ այնքան ուժ կուներ, որ մի շնչով իմանա Քո երկայնամտությունը, որով հանդուրժում ես մեր մեղքերը: Եթե մենք մեղք ենք գործում, լեցվում ենք անօրինությամբ, իսկ եթե բարիք գործում, ամբարտավանորեն գոռոզանում ենք: Առանց ողորմության ենք ծնվում մեկ մեկու համար: Եթե մեկը բարձրանում է, նախանձում ենք նրան, եթե մեկն ընկնում է, ուրախանում ենք: Եվ որքան մեր կյանքն է տեւում, այնքան երկարում է մեր մեղքերի շարանը: Դու կրճատեցիր մեր կյանքի տեւողությունը. դրա վերին սահմանը 70 տարին է, սակայն մենք Քո առջեւ մեղք ենք գործում յոթնապատիկ անգամ 70: Քո ողորմածությամբ Դու կրճատեցիր մեր օրերը, որպեսզի չերկարի մեր մեղքերի շարքը: Դիմում եմ քո արդարությունը վարագուրող ողորմածությանդ: Ամմաքուր մարդն ատում է իր նման անմաքուրին, սակայն դու սուրբ ես: Քեզ չեն զայրացնում մեր մեղքերը: Չարմանում եմ Քո արդարության վրա, որ այն չի մրցակցում ողորմածությանդ հետ, որովհետեւ որքան մեծանում են Քո շնորհները, նույնքան մեծանում է մեր ապականությունը: Նույնպես զարմանում եմ, թե ինչու մեկը չի բողոքում մյուսին, որ նա չի զայրանում Քեզ զայրացնողի վրա:

Դու մեզ ստեղծեցիր լիովին կատարյալ, սակայն անսահմանորեն վնասեցինք ինքներս մեզ: Դու մեզ սովորեցրիր արդա-

ՄԱՐԴՈՒ ԱՉԱՏ ԿԱՄՔԻ ՄԱՍԻՆ

Ս. Եփրեմ Ասորու (306-373) այս ճառը բացակայում է նրա երկերի հայերեն դասական թարգմանություններում: Ճառն ուշագրավ է վարդապետական նրբին թափանցումներով: Ի տարբերություն կամքի ազատությունը չընդունող արեւմտյան տեսության (Օգոստինոս Երանելի) Արեւելաքրիստոնեական Եկեղեցու աստվածաբանական համոզմունքն ընտանի կամքի ազատության վերաբերյալ Եփրեմյան մտածումները համերաշխ են Հայ Եկեղեցու վարդապետությանը, որ սկսվում է Արեւելքի հոգեբանախոսական հարուստ փորձառությունից: Թարգմանությունն իրականացված է հետեւյալ հրատարակության հիման վրա. Святый Ефрем Сирин, Творения, т. 5, Иерус. «Отчий дом», 1995, էջ 24-33:

րություն, մինչդեռ մենք հակառակ վարվեցինք: Մեր մեջ չլսեցինք մեր բնության առավելությունները: Դու մեզ ստեղծեցիր Քո ձեռքով, բայց մենք մեզնից հեռացրինք Քո պատկերը եւ Քո նմանությունը: Չարմանում եմ թե՛ մեկի եւ թե՛ մյուսի վրա, զինաթափվում եմ Քո ողորմության եւ Քո արդարության առջեւ:

Եթե մենք Նրա առջեւ մեղավոր ենք դառնում, աղերսում ենք մեզանից հատուցում չպահանջել, իսկ եթե պատահի, որ մեկը մեղավոր լինի մեր հանդեպ, նրանից պահանջում ենք՝ իր դեմքը չընթել նրանից: Մինչդեռ Քո արդարությունն այս է. եթե մարդ դիմում է Նրան՝ բողոքելով իր պարտապանի մասին, կանխավ ծանրութեթեւանում իրեն տրված գրավը եւ դրա հետ միասին՝ նրա պարտքը, որպեսզի նախ ինքը վճարի, իսկ հետո պահանջի հատուցումը: Եթե մարդ դիմում է նրան՝ խնդրելով թողնել պարտքերը, ինքն իսկ շտապում է նրա մոտ եւ նրան բերում նրա պարտա-

պանի մոտ, եւ ով ներել է իր պարտապանին, նա ինքը նրանից թողություն կստանա: Եվ նրանից կտեսնի գթություն, եւ մեր չարությունը կդատապարտվի նրա կողմից: Գթություն է տեսնում, եթե աղերսում է իր պարտքերը ներելու մասին, դատապարտվում, եթե պարզվի, որ պահանջում է հատուցում, այն ժամ իրենից իսկ կպահանջվի հատուցում:

Մեր ազատ կամքը մի հնարքով ստանձնում է Քո արդարությունը: Ու երբ պատահում է, որ մեղք է գործում արդարության դեմ, մատնացույց է անում իր անկարողությունը: Իսկ երբ մեկը մեղք է գործում նրա դեմ, մատնամիշ է անում նրա անարդարությունը: Նա չի նկատում, որ մեկը ոչնչացվում է մյուսով: Եթե մարդ անգոր է եւ ցանկանում է, որ իրեն ողորմեն, ապա անգոր է նրա պարտապանը եւս, որ խնդրում է ներել:

Մենք մեղք ենք գործում եւ մեղքերը վերագրում ենք նրան, ով մեղք չի գործում:

Եթե մեր բնությունը տկար է, ապա անմեղ է նա, ով մեղք է գործել մեր դեմ: Իսկ եթե մեր բնությունը տկար չէ, ապա շատ բան ենք մենք մեզ համար պահանջում:

Արդարությունն ի գործու է հաղիմանելու մեզ՝ մեր իսկ կողմից նրա շնորհիվ, ինչ կա մեր մեջ: Եթե այդ տկարություն է, ապա դա պաշտպանում է բոլորիս, իսկ եթե այդ գործություն է, ապա դա բոլորիս դեմ է:

Եթե գիտես, որ քո թշնամին ի վիճակի չէ քո հանդեպ ատելություն ունենալու, դա վերագրում ես քո սեփական ազատ կամքին, որ այն եւս կարող է մեղք չգործել: Եթե նա ունի հնարավորություն, ապա քո մեջ եւս կա ընտրելու ուժ:

Եթե մենք հավաստիացած ենք Աստծուն մեղք գործած մեր տկարության ապականացու լինելու մեջ, ապա սրանով ապացուցվում է մեր դեմ մեղք գործած մարդու անգորության ապականացու լինելը:

Եթե մարդ, իբրեւ տկար մեկը, համոզված է, որ ինքն արժանի է ողորմության, ապա նրա առջեւ անմեղ է նաեւ նրա հանդեպ մեղք գործածը: Եվ ընդհակառակը. եթե մեղադրում ենք մեր դեմ մեղք գործածին, ապա մեր մեղադրանքը մեզ իսկ դարձնում է պատասխանատու:

Ազատ կամքի բնույթը բոլորի մեջ նույնն է: Եթե այն անգոր է մեկի մեջ, ապա անգոր է եւ յուրաքանչյուրի մեջ եւ եթե գորավոր է մեկի մեջ, ապա գորավոր է մարդկանց բոլոր որդիների մեջ նմանապես:

Բնությամբ քաղցր քաղցր է առողջի համար, բայց դառն է հիվանդի համար: Այդպես է եւ ազատ կամքը. դառն է մեղավորների եւ քաղցր է արդարների համար:

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՍԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԻ (1763-1780)

Սկզբը՝ թիվ 7-15

Կ. Պոլսի պատրիարք դարձավ Նշանավոր Չաքարիա Կաղզվանցին, որը մեծատուն Բարիլույս Փոքուզյանի եւ Նազեի որդին էր՝ ծնված 1720 թվին։ Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցի աշակերտ է եղել, 1755 թվին լուսարարապետ Եղիազար Եպիսկոպոսի ձեռամբ դարձել է վարդապետ, իսկ Եպիսկոպոս Նրան ձեռնադրել է Շամախեցին։ Նա բարձրահասակ էր, գեղեցկահամ, մազառատ, լայնաճակատ, եւ ահեղ կերպարանք ուներ։ Կամքի ու գործի տեր մարդ էր՝ ազգի եւ եկեղեցու պայծառության նախանձախնդիր, նպատակադիր եւ դժվարություններից չվախեցող։ Նա Շամախեցու օրոք ուղարկվեց Եվդոկիա՝ որպես նվիրակ, եւ Էջմիածին վերադարձավ 1764-ի մարտի 4-ին։ 1767 թվին Սիմեոն կաթողիկոսը փորձեց Կ. Պոլսում փոխանորդություն ունենալու ձախողված



ծրագիրը Նրա միջոցով կյանքի կոչել։ Նա Կ. Պոլսի շրջանի նվիրակությունը բաժանեց երկու մասի, մյուսեւելլու պաշտոնը վերացրեց եւ Կ. Պոլսի նվիրակ Նշանակեց Չաքարիա Կաղզվանցուն։ 1767 թվի սեպտեմբերին պաշտոնագրերը գրվեցին, իսկ 1768 թվի սկզբներից անցավ իր պաշտոնին։ Նրա պաշտոնը նվիրակից ավելի բարձր էր եւ փաստորեն փոխանորդություն էր։ Երբ նա իր պաշտոնավարությունն ավարտեց, Նրան կրկին նույն պաշտոնին Նշանակեցին, ինչն աննախադեպ էր։ Նրա նվիրակության շրջանում Բասմաչյանի նկատմամբ ընդդիմությունը գնալով ուժեղացավ, բանակցություններ սկսվեցին Նոր պատրիարք ընտրելու համար։ Նա գիտեր, որ հաջողվում է իր թեկնածությունը, բայց այս մասին ոչինչ չի գրել։ Ավելին. դեռ մինչեւ 1774 թվի հունվարը նա այդ մասին Էջմիածնի լուր չէր տվել, չնայած 1773 թվի նոյեմբերի վերջից՝ հավանաբար նոյեմբերի 30-ից, երբ Նրան հաստատեց Բարձր դուռը, նա արդեն պատրիարքի պաշտոնին էր անցել։ Ինչ վերաբերում է Սիմեոնին, ապա նա միայն 1774 թվի փետրվարի 5-ին ստացավ Կ. Պոլսի մեծամեծների՝ հունվարի 4-ին գրած նամակը եւ ապրիլի 5-ին կոնդակ գրեց Նրա պատրիարքության մասին։ Մինչեւ կոնդակը հասավ Չաքարիային, նա արդեն վեց ամիս պատրիարք էր։ Նա, ըստ կոնդակի, պետք է հետեւեր 6 կանոնի. գործել Յայաստանյայց Եկեղեցու ավանդությունների համա-

ձայն, իր հոտին զգուշացնել ոչխարի մորթի հագած գայլերի ու կրոնից հեռացածների մասին, գործել՝ իշխանների հետ խորհրդակցելով, արժանավորներին պատիվ տալ, խռովարարներին խստությամբ վերաբերվել եւ դատել, եթե խրատով չուղղվեն, առաջնորդներ կարգել հավատի եւ կրոնի մեջ փորձվածներին, հնազանդ ու ստորադաս լինել Մայր Աթոռին։

Չաքարիայի պաշտոնավարության սկզբում առանձին իրադարձություններ չարձանագրվեցին։ Բայց այդ շրջանում եղան այնպիսի ձեռնարկներ, որոնք պատիվ ու հռչակ բերեցին Նրան։ Նա նախաձեռնեց այնպիսի քայլեր, որ ուսման նկատմամբ սերարթնանա, որ արմատավորվի հայեցի դաստիարակությունը՝ անկախ հռոմեականների ազդեցությունից։ Հռոմեականության շարժումը հենց ուսումնականի ընդի տակ էր ընդարձակվում, եւ դա էր հրապուրում շատերին։ Ճիշտ է՝ Արեւմուտքում ավելի գիտակ հոգեւորականներ էին պատրաստվում, որոնք տիրապետում էին օտար լեզուների եւ ծանոթ էին օտար գրքերին։ Նման կրթություն ունեցողները Հռոմում սովորած էին լինում Ծավալոցի կամ Վասն տարածման հավատո (De Propaganda Fide) դպրոցում եւ դպրոցի խալալական անունով (Collegio) կոչվում էին կոլեջից, կոլեճյանք, պրոպագանդայի կամ ծավալոցի աշակերտներ։ Վենետիկյան խումբը պատրաստում էր հայագիտության մեջ խորացած հոգեւորականների, մինչդեռ կոլեջիներն այդ առումով տկար էին եւ միայն օտարագիտու-



թյամբ էին փայլում։ Լիբանանում հաստատված Աստույանները եւ Չմմառի կաթողիկոսարանն էլ աշակերտներ էին պատրաստում, նման գործ էր կատարում Մխիթարյանների Տրիեստի ճյուղը։ Սրանք գործակցում էին Արեւելք եկած լատին քարոզիչների հետ, որոնց մեջ հայերեն քիչ թե շատ իմացողներ էլ կային։ Ուսումնաստեղությունը հրապուր էր դառնում շատ ազգերի համար։

Չաքարիան ստիպված էր գործել նման բարդ իրավիճակում։ Ուսումնական գործը զարգացնելու եւ պատրաստված կադրեր ունենալու համար անհրաժեշտ էին պայմաններ, որոնց ստեղծումը պահանջում էր հաղթահարել մեծ դժվարություններ։ Արեւելքում ոչ մեկը հենց այնպես միջոցներ չէր տալիս, իսկ Արեւմուտքը, առանց կրոնական գոհողությունների, իր ունեցածի մասին չէր իրազեկում։ Պետք էր մի համառ, վճռական ու կորովի անձ, որ գործեր նման հանգամանքներում։ Հատկապես պետք էին ճշմարիտ ազգասիրությամբ տոգորված անձինք, ինչպիսին եղել էր Վարդան Բաղիշեցին բուն հայկական գավառներում։ Մայրաքաղաքում Նրա գործունեությանը զարկ էին տվել Կոլոտն ու Նայանը, սակայն Նայանի հիվանդությունը մի պահ թուլացրել էր այն։ Իսկ դրան հաջորդել էր

Բասմաչյանի անհանգիստ շրջանը։ Չաքարիան էր, որ, հիրավի, զարկ տվեց այդ շարժմանը։ Նա հասկացավ, որ Հայոց Եկեղեցու հակառակորդների դեմ հաջող հանդես գալու միակ միջոցն ուսումնական ու դաստիարակական ասպարեզներում հզոր քանքեր գործադրելն է։ 1768 թվին դեռ Նոր էր նա Կ. Պոլսի եկել եւ պաշտոնին անցել, երբ կատարյալ դաստիարակի եւ ուսուցչի դերն իր վրա վերցրեց։ Նայանից շատ տարիներ անց Նորոգեց Մայր եկեղեցուն կից հին դպրատունը, որտեղ նա ստանձնեց ուսուցչի պարտավորությունը եւ վերակենդանացրեց Նայանի ազգանվեր գործը։ Չուգահեռներ են տարվել այս երկուսի միջեւ։ Հակոբ Նայանն անվանվել է արհիպանձ Եպիսկոպոս, իսկ Չաքարիան՝ արհիպպոսակ արքեպիսկոպոս։ Չաքարիան առավել ձեռնհասությամբ ու հմտությամբ ընդարձակեց իր ծրագիրը, երբ բարձրացավ պատրիարքական աթոռին։ Նրա աշակերտներից Նշանավոր դարձան Հակոբոսը, Բարթողիմեոսը, Հովհաննեսը, Հակոբը, Անդրեասը, Պողոսը եւ Պետրոսը, որոնք Եպիսկոպոսներ ձեռնադրվեցին, իսկ Թովմասը, Թադեոսը, Կարապետը եւ Աստվածատուրը՝ վարդապետներ։ Նա ճոխացրեց շատ դպրատներ, որտեղ վարժապետներ Նշանակեց եւ թաղային վարժարանների հիմնադիրը եղավ։ Վարժապետները շուկայում կամ խանութում սենյակ էին վարձում եւ այցելուներին գրել ու կարդալ սովորեցնում։ Թաղային վարժարաններից անդրանիկը եղավ Գում-Գափուի Ֆըլքըն փողոցում բացվածը՝ Շնորհք ամիրայի բարերարությամբ։ Հետո հիմնվում են Բալաթի, Բերայի, Սամաթիայի, Օրթաքյոյի, Կուրուլեշմեի եւ Սկյուտարի թաղային դպրոցները։ Այդտեղ պաշտոնավարողները կոչվում էին մանկավարժներ։

Շարունակությունը՝ էջ 4

Հայ կնո՞ւն որսկերումն օսարագգի գրողների երկերում

Սկզբը՝ թիվ 15

Հայուհիների մասին որոշ ուշագրավ տեղեկություններ կան նաեւ Ալեք Վառլի «Տորին միւսարեթի վրա» երկում (Waugh A., The Mule on the Minaret. Farrar, Straus and Giroux, New York, 1965)։ Վերջինիս հերոսուհիները երկու հայազգի քույրեր են։ Նրանք կրկնակի գործակալ Ալեքս Բելլորյանի զարմուհիներն են։ Ալեք Վառլն հետեւյալ կերպ է նկարագրում Կումայան քույրերին. «Նրանք միջահասակ էին, մի փոքր դմբիկ, թխամաշկ, մուգ ճառագող աչքերով եւ սեւ փայլուն վարսերով, որոնք ազատ թափվում էին նրանց ուսերին» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 104)։

Անգլիացի Ֆարարը, որը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայում էր Բելլորյանում՝ որպես սպա, խելահեղորեն սիրահարվում է իմաստուն Անաբելին։ Երբ անգլիացին մի անգամ խնդրում է Անաբելին առանձնանալ՝ մտերմիկ գրույցի համար, նա պատասխանում է. «Կարիք չկա առանձնանալու՝ մտերմիկ գրույցի նպատակով, եթե կարող ես խելացիորեն քողարկել խոսակցության իմաստը» (տե՛ս Hamalian L., նշվ.

աշխ., էջ 104)։ Այս մեկ նախադասությամբ Ալեք Վառլն արդեն իսկ շատ բան է ասում հայազգի կնոջ մասին։ Ընթերցողին միանգամայն պարզ է դառնում, որ հայ կինը խելացի է եւ ճկուն ու բնավ չի կարող դառնալ պարզունակ կանանց շարքը։

Ֆարարը, հավաստիանալով, որ ինքը ոչ մի տեղ չի գտնի Անաբելի նման լավ կին, բնակություն է հաստատում Լիբանանում եւ ամուսնանում Նրա հետ։ Անաբելն ու անգլիացին երեք երեխա են ունենում։ Տասնհինգ տարի անց պրոֆեսոր Ռեյդը՝ գրքի շարադրողը, այցելում է հայուհուն եւ ի զարմանս իրեն՝ տեսնում, որ Անաբելը բնավ չի կորցրել իր նախկին գրավչությունը, ավելին՝ դարձել է ավելի գեղեցիկ ու հմայիչ։ Նրա երեխաները բարեկիրթ էին։ Նրանք հանգիստ նստած էին ու չէին ընդհատում գրույցը եւ խոսում էին միայն այն ժամանակ, երբ Նրանց դիմում էին։ Երեխաների այս որակները շատ դուր եկան պրոֆեսոր Ռեյդին։

Չրույցի ընթացքում հայուհին խոսում է «իդեալական ամուսնու» կերպարի մասին։ Երբ պրոֆեսոր Ռեյդն ասաց, որ Անաբելն ավելի շատ բան է ուզում, քան կարող է ստանալ որեւէ կին, նա

պատասխանեց. «Որքան շատ բան ես ուզում, այնքան շատ ես ստանում։ Ես միշտ իմացել եմ, թե ի՛նչ կարող եմ ստանալ եւ որտեղից կարող եմ ուզածս ստանալ։ Արդյոք իմ կողմից հիմարություն չէ՞ր լինի դառնալ Ֆարարի սիրուհին այն դեպքում, երբ նա շատ ավելի գրավիչ է որպես ամուսին» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 104)։ Այնուհետեւ կնոջ աչքերը փայլատակեցին, եւ նա ավելացրեց. «Բայց դուք, իմ թանկագին պրոֆեսոր, ավելի հմայիչ կլինեիք իբրեւ սիրելի, քան թե իբրեւ ամուսին» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 104)։ Ինչպես կարելի է դյուրությամբ հասկանալ ներկայացված մեջբերումից, հայ կինն իրականում այնքան էլ բարդությամբ չէ, ինչպես մենք հաճախ մտածում ենք։ Պարզվում է, որ նա երբեմն հանդես է գալիս սեփական ճակատագիրը համարձակորեն կերտողի, նախաձեռնողի եւ նույնիսկ գայթակղողի կերպարով։ Թեեւ Ալեք Վառլն իր գրքում գրում է մի քանի տասնամյակ առաջ ապրած հայ կնոջ մասին, սակայն մենք կարող ենք որոշակի զուգահեռներ անցկացնել օտարազգի գրողի պատկերած կնոջ եւ ժամանակակից հայ կնոջ կերպարների միջեւ։




Գործ՝ Վարդիթեր Կարապետյանի

Որոշ այլազգի գրողների ներկայացմամբ հայ կինը զգայական է, կրքոտ, երբեմն նույնիսկ՝ ագատամիտ։ Եթե հայ մոր կերպարը նույնացվում է սրբության հետ, ապա հայ կնոջ կերպարը նույնացվում է աշխարհիկության հետ։ Ասվածը հիմնավորելու համար բավական է հիշել Իվան Գոուլդի «Հիվանդ ընկերներ» վեպը (Gold I., Sick Friends. E. P. Dutton, New York, 1969)։ Գրքի հերոսուհին Զրիստա Սարգսյանն է, որը պատրաստվում է գնալ Կալիֆոռնիա՝ իր ընտանիքին այցելելու նպա-

տակով։ Ծանապարհին նա կանգ է առնում Նյու Յորքում։ Այստեղ նա ծանոթանում է Ջեյսոն Սեմսի հետ եւ պարզապես ներխուժում Նրա կյանք։ Զրիստան մի տեսակ Նոր շուկ է կենսալիցք է հաղորդում Ջեյսոնին, որը հոգնել էր դիմազուրկ կանանց բազմությունից։ Հայուհին բնավ այդպիսին չէր։ Նրա մեջ ամեն բան արտասովոր էր ու յուրահատուկ. նրա անցյալը, Նրա արտաքինը, որն աչքի էր ընկնում զգայականությամբ, եւ վերջապես՝ Նրա կրթվածությունը։

Շարունակությունը՝ էջ 7



ԱՐԶԱԿ

Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-15

Ժամանակակից հայ արձակուրդ ուրույն տեղ ունի նաեւ հերոսի ներաշխարհի բացահայտման խոստովանանքային ուղղությունը, որին հարում են Հ. Մելքոնյանը, Ռ. Հովսեփյանը, Վ. Գրիգորյանը:

Բացի **Խանգաղանի** վեպից՝ մյուսներն ունեն ինքնակենսագրական բնույթ, բայց եւ Խանգաղանն էլ իր վեպում չի թաքցնում դեպքերին ու գործողություններին իր հեղինակային մասնակցությունը: Վեպի հերոսը Ճել Ավան բիճան է, որն ուղեկցում է հեղինակին՝ դառնալով նրա Վիրգիլիսը: Հեղինակի ու նրա հերոսի աչքի առջեւ գալիս անցնում են փոքրիկ քաղաքի, ըստ ակնարկների՝ հեղինակի ծննդավայր Գորիսի մարդիկ: Նրանք երեւում են իրենց կյանքի պատմություններով, կենցաղով, փոխադարձ հարաբերություններով:

Ճել Ավան բիճան փողոց մաքրող է: Նրա աչքի առաջ է ամբողջ քաղաքը: Լուռ ու մուսնջ նա իր գործին է, բայց աչքը շատ բան է տեսնում, եւ խիղճը շատերի գնահատականն է տալիս՝ որոշակիորեն դրսևորելով իր համակրանքներն ու հակադրանքները: Ըստ այդմ էլ՝ ձեռնարկում է վեպի կառուցվածքը՝ առանձին թաղերում ապրող մարդկանց որոշակի պատմությունների շուրջ համախմբելով հերոսների դիմանկարային ակնարկները: Այդ ընթացքում ձեռնարկում է եւ հենց իր՝ Ճել Ավան բիճայի կերպարը, որը ողբերգական ճա-

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

կատագրի տեր, բայց եւ ժողովրդական իմաստությամբ ապրող մարդ է: Սովից ու պատերազմում գոհվել են նրա հինգ որդիները, բայց սեփական ցավը կուլ տալով՝ նա անչար ու բարի աչքերով է նայում աշխարհին ու մարդկանց: Եվ այդպես մարդկային պատմությունների շաղախով գրողն ստեղծում է նկարագրվող քաղաքի ամբողջական պատկերը՝ կենցաղից ու բարոյական հարցադրումներից մինչեւ սոցիալ-տնտեսական խնդիրներ:

Ս. Խանգաղանը, որը լայն ընդգրկումով պատկերում է Հայաստանի կյանքը՝ սկսած հնադարից մինչեւ մեր օրերը, իր ստեղծագործության մեջ անդրադարձել է նաեւ Հայաստանի շինարարական առօրյային: Այդ նյութով գրած նրա «Քաջարան» վեպը ստեղծագործական նվաճում էր: Ետպատերազմյան տարիների տնտեսական վերակառուցման ժամանակաշրջանի ընդգրկումով նա պատկերել է Քաջարան քաղաքի կառուցումն ու պղնձամոլիբդենային կոմբինատի գործարկումը: Վեպում կան սոցիալ-հոգեբանական կարգի տարբեր անցումներ՝ նախկին գյուղացին աստիճանաբար անցնում է քաղաքային կյանքի, փոխվում են կենցաղն ու հարաբերությունները, որոնք եւ վերափոխում են մարդկանց հոգեբանությունը: Եվ հենց մարդկանց հոգեբանական աշխարհում կատարվող փոփոխությունների պատկերմամբ էլ պայմանավորված է կերպարների լիարյունությունն ու համոզականությունը:

Աթազ ագիի հոգու մեջ դեռ ծխում է ու պիտի ծխա պատերազմում կորցրած չորս որդիների կորուստը: Անհիմն մեղադրանքների ենթարկված Բագրատ Աղամյանի կողքին դեռնու շարունակում են ղեկավար դիրք գրավել Գեորգի Փոլադյանի պես նախկին զրպարտիչները, Ցական Ցակա-Նյանի նման բարոյապետ ընկած մարդիկ: Այս ուժերի մեջ ձեռնվորվող բախման շուրջ էլ ծավալվում են վիպական գործողությունները: Ահա աշխատանքային ու մարդկային այս հարաբերությունների ոլորտում էլ ձեռնվորվում են Արսենի, Բաբկենի, Շուշանի, Մուքայելի, Սերաֆիմ Պրոտոփի, Ավդոտայի եւ մյուսների կերպարները: Ընդ որում, վիպական գործողություններն ընդգրկում են ոչ միայն ներկան, այլեւ հուշերի ու վերհուշերի միջոցով

խորանում են անցյալի մեջ՝ ըստ ամենայնի ուրվագծելով մարդկային կերպարների ու հոգեբանական վարքագծերի կենսագրական պատճառաբանվածությունը: Ներքին պայքարը ծավալվում է հանուն հայրենասիրության ու մարդկային բարձր արժանիքների, ինչն էլ դառնում է հսկա շինարարության հոգեւոր շաղախը:

Բայց ահա այս հաջողությունից հետո «Սեւանի լուսաբացը» վեպում գրողը ձախողման ենթարկվեց: Նյութն այս դեպքում հանրապետության տնտեսության համար դարձյալ կարեւորություն ունեցող այնպիսի մի կառույց էր, որը տարիներ շարունակ



իրեն էր գամել մամուլի, հեռուստատեսության, արվեստի բնագավառի մարդկանց ուշադրությունը: Խոսքն Արփա-Սեւան ջրատարի շինարարության մասին է, որն այնքան կենսական նշանակություն ուներ Սեւանա լճի փրկության համար: Գրողը պատկերել է ջրատարի շինարարությունը եւ շինարարների առօրյան: Նյութը եւ կերպարները որոշակի են եւ ունեն նախակերպարային հավաստիություն: Առավել բնութագրական է գլխավոր հերոսի՝ Գեորգ Դալյանի կերպարը. ծանր անձնական կյանք է բաժին ընկել թունելագործ վարպետին, որը, սակայն, աշխատանքային սխրանքի է տանում վերափոխվող, ամրացող հողիներին եւ, ի վերջո, դառնում տե-

ղամասի գաղափարական ղեկավարը: Բայց, դժբախտաբար, վեպում չի գտնված այն հոգեբանական շաղախը, որը պիտի միավորեր մարդկային կերպարներն ու շինարարության ընթացքը: Վիպական գործողությունները դարձել են բավականին սխեմատիկ եւ արհեստական: Թերացումների հիմնական պատճառները հետեւյալներն են. նկատվում է սխեմաների եւ կանխամտածված պատրաստի մոտեցման անհաղթահարելիություն, բախումի կեղծություն, կյանքի դրամատիկ վիճակների անտեսում, հարցադրումների պակաս եւ նյութի գեղարվեստական դժվար յուրացում:

Գրաքննադատ Գ. Գոցը, Ս. Խանգաղանի «Քաջարան» վեպի առիթով, այս բնույթի գրականության մասին իրավացիորեն գրում է. «Մարդ եւ կուլեկտիվ, անհատ եւ հանրություն,- այս խնդիրների գեղարվեստական քննությունը գրողից պահանջում է հոգեբանական խոր հետազոտություն, հոգեկան տեղաշարժերը, արարքների դրամատիզմները նուրբ եւ միաժամանակ ճշգրիտ տեսնելու, շրջապատող իրականությունն ընկալելու, հերոսների բնավորությունները մի տեսակ ներսից ցուցադրելու կարողություն» («Պրավդա», 1974, 24 հուլիս):

Արտագրական-աշխատանքային նյութը միշտ էլ կարեւորություն է ունեցել նորագույն շրջանի գրականության մեջ, եւ անհրաժեշտ է այս ուղղությամբ տարվող աշխատանքները բարձրացնել գեղարվեստական խոսքի ժամանակակից մակարդակի պահանջներին: Հակառակ դեպքում դեռեւս տագնապալի ձեռով հնչում են այս բնույթի գրականության հասցեին ուղղված պահանջն ու խոսքերը. «Մասշտաբային նյութ է նեղ բախում», «Կա մակերեսը, չկա խորքը», «Նյութը պարտավորեցնում է»: «Ճգնաժամ, թե՛ անցումային փուլ»: Իրոք որ, նյութը պարտավորեցնում է, եւ ժամանակը՝ պահանջում:

Հանրապետության շինարարական առօրյան գյուղաշխարհի նյութի յուրացումով իր արտացոլումն է գտել Բ. Թափալցյանի «Հայրենաշեն» (հ. 1, 1963, հ. 2, 1973), Ա. Սահիկյանի «Կարոտ» (1974) եւ Մ. Գալշոյանի «Բովտուն» (1974) վեպերում:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՍԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Չաքարիայով սկսված շարժումն այլեւս դադար չունեցավ եւ հետագա առաջընթացի սկզբնավորությունը հանդիսացավ: Նա իրավամբ հանդիսանում է ԺԸ դարի ազգային զարգացման մեջ վաստակ ունեցող առաջին երախտավոր գործիչը:

Իսկ այդ ամբողջ շրջանում Սիմեոն կաթողիկոսը շարունակում էր իր տենդագին գործունեությունը՝ կարգ ու կանոն հաստատելու եւ բարեկարգություններ կատարելու ուղղությամբ: Կարեւոր գործերից մեկը եղավ Մայր Աթոռում տպարան հիմնելը: Կաթողիկոսները նպաստել են տպագրական գործի զարգացմանը, սակայն Էջմիածնի կացությունը հնարավորություն չէր ընձեռնում՝ այնտեղ տպարան հիմնելու համար: Ուստի տպարաններ, որպես կանոն, ստեղծվում

էին Արեւմուտքի քաղաքներում՝ Ամստերդամում, Մարսելում, Վենետիկում, Լիվոռնոյում, եւ անգամ՝ Կ. Պոլսում եւ Սպահանում, սակայն ոչ՝ Վաղարշապատում: Ծիշտ է՝ բացված տպարաններից մի քանիսը Սբ Էջմիածնի կոչվեցին, սակայն մինչեւ Սիմեոնն Էջմիածնում տպարան չկար: Նա այդ միտքը հղացել էր կաթողիկոս դառնալուց քսան տարի առաջ, երբ տակավին սարկավագ՝ նվիրակ էր Հնդկաստանում: Այդ միտքը նա կարողացավ ներշնչել մարդասաքնակ ջուղայեցի մեծահարուստ վաճառական Գրիգոր Միքայելյան Խոջաջան Չաքիկյանին, որը հանձն առավ հոգալ անհրաժեշտ ծախսերը՝ որպես իր անձի եւ գերդաստանի հիշատակ, սակայն մեզ անհայտ պատճառներով Սիմեոնն իր վարդապետության ու եպիսկոպոսության շրջանում այդ նպա-

տակը կյանքի կոչելու քայլեր չձեռնարկեց: Հավանաբար Չաքիկյանն անձնապես Սիմեոնին էր վստահում, իսկ նա շարունակ բացակայում էր Մայր Աթոռից: Իսկ երբ նա կաթողիկոս դարձավ, նրա առաջին գործը եղավ տպարանի համար տառեր եւ գործիքներ հայթայթելը:

Իմանալով, որ ջուղայեցի Առաքել Պողոսյանն Ամստերդամում Իոհան-Միքայել Ֆլայշմանին հայերեն տառեր է պատվիրել, սակայն չի կարողացել տպագրություն սկսել՝ գործավորների պակասի պատճառով, նա 1765 թվի մարտի 4-ին Նամակ գրեց Չմյունխայի նվիրակ ու առաջնորդ Դուկաս Կեղեցուն կամ Կարնեցուն, որ նա դրանք գնի եւ առաքի Մայր Աթոռ: Հետո լուր եկավ, որ Մարկոս տպագրիչը Չմյունխայում տպարան է բացել, ուստի Ամստերդամից

լուր չունենալով՝ նա 1765 թվի դեկտեմբերի 6-ին գրեց Նույն Դուկաս վարդապետին, որ կա՛մ Մարկոսի տառերը գնի, կա՛մ էլ տպագրիչին, տառերի հետ, ուղարկի Էջմիածին: Նամակ ուղարկվեց նաեւ Սարգիս Սարաֆյան եպիսկոպոսին, որ Վենետիկում տառեր էր պատրաստել տվել ու փոխադրել Կ. Պոլիս: Սակայն Նշված գործերից ոչ մեկը չհաջողվեց: Առաքելի գրերի վաճառքին խանգարեցին Ամստերդամի հայերը՝ ինչ-ինչ կասկածներ ունենալով, Սիմեոնն տպագրիչը չուզեց իր սկսած գործը խափանել, իսկ Սարգիս Սարաֆյանը տառերը վաճառեց Գեորգ Կեսարացի դպիրին, որը Կ. Պոլիս Վեգիրիսանում տպարան բացեց ու շատ չանցած՝ 1766 թվի մայիսի 11-ի երկրաշարժի ժամանակ, խանի փլատակների տակ մահացավ: Սիմեոնն իր մտքից չիրաժարվեց եւ կարողացավ նոր տառեր փորագրել ու ձուլել տալ: Թերեւս, դա արեց փորագրող եւ քանդակող Հարություն Էջմիածնեցին: Տպարանը բացվեց 1771 թվին՝ Չաքիկյան Գրիգորի բարերարությամբ: 1772 թվին հրատարակ-

վեց «Չքսարան հոգեւոր» գրքույկը, իսկ 1773-ին՝ «Տաղարանը»: Դժվար էր թուղթ ճարելը, եւ Սիմեոնը կրկին դիմեց Չաքիկյանին՝ թղթի գործարան ստեղծելու խնդրանքով: Դժվար եղավ նաեւ մասնագետներ գտնելու խնդիրը: Կաթողիկոսին գոհացրեցին Պարսկաստանից եկողները, իսկ Չաքիկյանը պայմանավորվեց Փարիզից եկած թուղթ պատրաստող ֆրանսիացի վարպետներ Բեյսոնի եւ Դեսիոնի հետ, որոնք Կ. Պոլսից եկան Էջմիածին եւ կարծես թե միտք ունեին փողերն ստանալ ու փախչել, ինչն ստիպեց Սիմեոնին նրանց սպառնալ ֆալսիայով ու սառնատնով, որ գործը կատարեն: Թղթի արտադրությունը կարգավորվեց 1776 թվին՝ Իսահակ Գեղամացի եպիսկոպոսի հսկողությամբ: Պատրաստված թղթի վրա Ս. Կ. եւ Գ. Մ. ջրանկար հապավումները կային, որոնք արտահայտում էին կաթողիկոսի եւ Գրիգոր Միքայելյան Չաքիկյանի անունները:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
33 ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր

ՈՎԲԵՐ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱՆՁԱՅՈՒՅԳ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ (ՇԱՀԱՊԻԿԱՆԻ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐԶ)

Սկիզբը՝ թիվ 15

Ն. Ակիկյանը համաձայն է Վարդան Մամիկոնյանին վերագրված «կրավորական» դերի հետ՝ հատկապես այն պատճառով, որ Նախադրությունը ոչ թե Վարդան Մամիկոնյանին, այլ անհայտ ոմն Մանաճիիր Ռշտունուն է հատկացնում Հայոց սպարապետի պաշտոնը, ուստի եռանդով առարկում է Վարդան Մամիկոնյանի դերը նսեմացնող նման մեկնաբանումների դեմ: «Կանոնաց Նախադրության մեջ յայտնուած այն միտքը... որ սպարապետությունը խլուած է Մամիկոնեաններու ձեռքէն եւ յանձնուած ուրիշ տոհմի մը, ժամանակավորեալ մը պէտք է նկատել: Զիչ յետոյ պիտի տեսնեք, որ այդ Նախադրությունը խմբագրուած է ուշ ժամանակ մը, յամենայն դէպս է դարէն ետքը, հաւանորէն Ը դարու սկիզբը» (Ն. Ակիկյան, թիւ 4-12, էջ 81-82):

Շարունակության մեջ Ն. Ակիկյանը կրկին վերադառնում է Ե դարի առաջին կեսի քաղաքական հանգամանքներին եւ Վարդան Մամիկոնյանի դերի թերագնահատմանը, որ տեղ է գտել Շահապիվանի ժողովի արձանագրություններում: «Ղ. Փարպեցի, որ միակ պատմիչն է, որ կը նկարագրէ այնքան վառ գոյներով 448-485 շրջանի պատմությունը, այսպիսի պատկեր չէ գծած, յատկապես ի մասին Մամիկոնեաններու: Մամիկոնեանը ոչ թե «ղոյեալ» էին, կամ «կային ի գարագիլ արգելեալ», այլ ունէին իրենց առջեւ արձակ աս-

պարեզ: Վարդան Մամիկոնեան տակաւին հայ բանակին սպարապետն էր. իբրեւ այնպիսի նա մասնակցած էր Յազկերտ Բ-ի արշաւանքին ընդդէմ Զուշանաց: Խմբագիրը ինչ շփոթման մէջ է: Նա շփոթած է Կարմիր Վարդանը Զաչ Վարդանի հետ. ճիշդ են իր նկարագրությունները Զաչն Վարդանի անձին եւ ժամանակի մասին. նա նկատի ունի 572ի պատերազմի նախօրեակը» (Խմբ. Հանդ. Ամս. 1936, էջ 135-136, Ն. Ակիկյան, թիւ 4-12, էջ 90):

Այստեղ Ն. Ակիկյանը ձեռքի հետ վկայակոչում է իր վաղեմի փցուն տեսակետը 7-րդ դարում ապրած ոմն կեղծարար Եղիշեի մասին, որը իբրեւ Ղազար Փարպեցու Պատմության ազդեցությամբ նենգափոխել է 572 թ. պարսիկների դեմ ապստամբած եւ Կ. Պոլիս փախած Վարդան Մամիկոնյանի պատմությունը, որ գրել է Սեբեոսը, եւ կեղծ պատմություն հորինել Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան Մամիկոնյանի եւ այդ ժամանակի անձերի ու անցքերի մասին: Նա թյուրիմացաբար «Կարմիր Վարդան» է անվանում հենց 572-ին ապստամբած Վարդան Մամիկոնյանին, մինչդեռ իրականում Սեբեոսի Պատմության մեջ «Կարմիր Վարդան» է կոչված Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան Մամիկոնյանը: «Արդ՝ գծամանակս թագաւորութեանն չարագործին Յազկերտի. եւ եթէ ո՞րպէս նա կամեր գաստուածայինն եղծանել կարգս, եւ կամ ո՞րպէս քաջ նախարարացն Հայոց եւ Նախանձա-

ւորն Աստուծոյ Նահապետն Մամիկոնեից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւքն եւ զաւրաւքն իւրեանց կազմեալ զինեցան ի պատերազմ... եւ թէ որպէս ի վերայ լոցա եկին զաւրքն պարսիկ սաստիկ բռնութեամբ, եւ կամ ո՞րպէս ի դիմի հարեալ զիւրեանց կատարեցին զնահատակութիւնս իւրեանց յԱպր Շահիր մերձ ի Նիւշապուի քաղաքի, ի տեղուշն, որ կոչի Թեարքունի - այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ Նոյն իսկ պատմութիւնս» (Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երեւան, 1979, գլ. Է, էջ 64-65): Այս «առեքեսումից» դժվար չէ հասկանալ, որ երկու Վարդան Մամիկոնյանների պատմությունը նենգափոխողն ինքը՝ Ն. Ակիկյանն է, եւ ոչ թե՝ 7-րդ դարում գոյություն չունեցած կեղծարար Եղիշեն:

Սահակ Պարթեւին Հայ Եկեղեցու կաթողիկոսական աթոռից գրկելուց հետո Պարսից արքաները չէին կարող վստահել նրա թոռ Վարդան Մամիկոնյանին Հայոց սպարապետի պաշտոնը: Այլ բան է, որ նրանք օգտվում էին Վարդան Մամիկոնյանի հեղինակությունից եւ քաջությունից, երբ նրա գլխավորությամբ Հայոց այրուծին ուղարկում էին իրենց հեռավոր թշնամիների դեմ պատերազմելու, որտեղ նա կարող էր հաղթել կամ նահա-



տակվել: Պարսից արքունիքը երկար ժամանակ վարանում էր Հայոց սպարապետ նշանակել Վարդան Մամիկոնյանին՝ նրա սպարապետ հոր՝ Համազասպի մահից հետո, անշուշտ այն պատճառով, որ նա Սասանյանների համար անբարեհույս Սահակ Պարթեւ կաթողիկոսի թոռն էր եւ դեռ ավելին՝ Թեոդոս կայսրից ստացել էր ստրատելատ (գորագլուխ) ռազմական կոչումը (Մովսիսի հորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, Գ, ԾԷ, էջ 335, ԿԷ, էջ 356): Կորյունը Նույնպէս Վարդանին հիշատակում է որպէս իշխան՝ նրա պապ Սահակ կաթողիկոսի հուղարկավորության առիթով, որին նա ներկա չէր: Հուղարկավորությանը ներկա էր միայն նրա կինը՝ Դուստր անունով (հորենացույ մոտ՝ Դստրիկ) (հոր., Գ, ԿԷ, էջ 356. «...որում անուն էր Դստրիկ, կին Վարդանայ ստրատելատի...»), որին Կորյունն իշխանական է անվանում (Կորյուն, Վարդ Մաշտոցի, հրատ. Մ. Աբեղյանի, Երեւան, 1941, (ԻԴ), էջ 88): Դա հենց հաստատում է, որ այդ ժամանակ Վարդան Մամիկոնյանն

իշխան էր, բայց ոչ՝ Հայոց սպարապետ: Վարդանը բացակայում էր նաեւ 6 ամիս հետո՝ Մաշտոցի հուղարկավորությանը, որին մասնակցում էր զինվորական կողմից նրա եղբայր Հմայակ Մամիկոնյանը՝ հազարապետ Վահան Ամատունու հետ: Դա ենթադրել է տալիս, որ այդ ժամանակ նա Հայաստանում չի եղել եւ երեւի գլխավորում էր Իրանում ծառայող Հայոց այրուծին: 440-ական թվերին Վարդան Մամիկոնյանի սպարապետության պաշտոնին որոշակի լույս է սփռում ինքը՝ սպարապետը, երբ Ավարայրի ճակատամարտից առաջ խրախույս կարդալով իր զինակիցներին՝ նրանցից ոմանց քաջությամբ եւ իշխանական գահով համեստորեն իրենից վեր է դասում: «Արդ աղաչեմ զձեզ, ո՞վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձեռն լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցեք, հեշտ եւ բաղձալի թուեցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց» (Եղիշե, էջ 101):

Շարունակությունը՝ էջ 7



Սկիզբը՝ էջ 2

Եթե մեկը փափագում է իմանալ քաղցրի բնույթը, ապա փորձում է այն ճաշակել եւ իմանալ ոչ թե հիվանդի բերանով, երբ նա հիվանդ է: Զանգի միայն այն անոթն է առողջ, որի մեջ կարող է հասկացվել համը: Պարագան Նույնն է, եթե մարդ ցանկանում է հետախուզել ազատ կամքի գործությունը, դա կարող է անել ոչ թե անմաքուր մարդու միջոցով, ով հիվանդ է եւ ապականված: Միայն անբիծը, ով առողջ է, կարող է լինել այնպիսի անոթ, որի մեջ կարելի է քննել ազատ կամքի գործությունը: Եվ եթե հիվանդը հարկադրված է քեզ ասել, որ քաղցրը նրա քիմքին դառն է, ապա տես, թե որքան է նրան ընկճել հիվանդությունը, որ ճշշել է նրանում քաղցրության զգացողությունը՝ հաճելի համի ակունքը: Ճիշտ այդպես, եթե ապականվածը հարկադրված է ասել, որ նրա կամքն անգոր է, ապա տես, թե որքան է նա կորցրել ապավիստությունը, որ ինքն իրեն գրկում է ազատությունից՝ մարդկային բնության այդ թանկագին (հատկությունից):

ՄԱՐԴՈՒ ՎՉԱՏ ԿԱՄՔԻ ՄԱՍԻՆ

Բ

Բոլոր մարդկանց որդիներն անընդմեջ պայքարի մեջ են: Ով հեռու է զգայական քմահաճույքից, նրան շարժում է հպարտությունը (այստեղ՝ գոռոզությունը), իսկ ով ազատ է հպարտությունից, նա ծառայում է մամոնային:

Եթե մարդու համար հնարավոր է հաղթանակը, որպեսզի իրեն դարձնի մաքուր եւ անապական, ապա նա կարող է մեղքի մեջ հանդիմանել նրան, ով բռնված է մեղքով: Եվ բռնվածը, եթե միայն ցանկանար, սանձ կդնէ իր անդամներին:

Մեղավորի սիրտը չար է: Երբ նա պնդում է, որ ապականությունն իր սեփական կամքի մեջ է, այնժամ կեղծավորությամբ այդ մասին խոսում է Տիրոջ առջեւ:

Մարդու մեջ անթեղված զոջումը ծառայում է իբրեւ բավարար միջոց ինքն իրեն մեղադրելու համար: Եթե նրա բնույթը նողկալի լիներ, ապա ինչպե՞ս կարող էր նրանում անթեղված լինել զոջումը, որ հիանալի է: Չոջումի միջոցով աղամորդին դառնում է հրաշալի եւ ազնիվ ու խուսափում է ապականությունից, որի պատճառով էլ նրա ներսում անթեղված այս հրաշալիքը հանդիմանում է նրան այն բանում, որ նա ինքն է մեղավոր իր իսկ ապականության մեջ:

Եթե մարդ, թեկուզ հպանցիկ կերպով, մոտենա կրակին, կիմանա կրակի հատկությունը. հենց այն, որ նրա գործությունն իր իսկ մեջ է: Նույնը պետք է ասել ազատ կամքի մասին. նրա գործությունն իր իսկ մեջ է: Սակայն կրակի գործությունը միշտ կաշկանդված է, մինչդեռ կամքի գորու-

թյունը՝ միշտ ազատ՝ մե՛րթ խաղաղվում է, մե՛րթ՝ եռում:

Եթե մարդ իր մատի ծայրով համտեպի ծովի ջուրը, կիմանա, որ ծովը, որքան էլ մեծ է, միեւնոյն է, դառն է: Ճիշտ այդպես էլ մեկ մարդու միջոցով կարելի է դատել բոլորի մասին:

Ճիգ մի՛ արա քննել բոլոր մարդկանց. արդյոք նրանք կարո՞ղ են չարի դեմ պայքարում հաղթահարել չարը: Եթե կարող է հաղթահարել մեկը, ապա կարող են եւ բոլորը: Եթե վերցնես միայն Նոյին, ապա նա կարող էր մեղադրել իր բոլոր ժամանակակիցներին, ովքեր, եթե միայն ցանկանային, երջանիկ կլինեին: Զանգի ազատ կամքի գործությունը



Նույնն էր ինչպես նրանց, այնպես էլ Նոյի մեջ:

Եթե քո դեմ մեղանչողին ենթարկես պատասխանատվության՝ այն բանի պատճառով, որ մեղանչել է քո դեմ, ապա դրանով կհանդիմանես ինքդ քեզ, որ դու (ինքդ) ես կարող էիր մեղք չգործել ո՛չ մերձավորիդ եւ ո՛չ Աստծո նկատմամբ:

Մեղավորն իր կամայականությամբ աղավաղում է իր բառերը: Եթե ինքն է մեղք գործել, ապա խոսում է իր անգործության մասին, իսկ եթե ընկել է իր մերձավորը, խոսում է կամքի գործության մասին:

Եթե ականջ դնես մեղավորի աղոթքին, ապա այստեղ եւս երկակիություն կգտնես: Նա վկայում է, որ ինքն անգոր է, իսկ մերձավորի կամքը շատ ավելի զորավոր եւ պինդ է, քան իրենը: Մոռանում է իր սեփական մեղքերը եւ գանգատվում իր առջեւ մեղք գործողից: Ի՞նչ հետեւություն կցանկանա կատարել մարդ մեկից եւ մյուսից: Եթե հնարավոր համարի տկարությունը, այնժամ կաղոթի նաեւ իր մերձավորի համար, իսկ եթե հնարավոր համարի (կամքի) ուժը, այնժամ կգայրացնի Դատավորին: Եթե մարդ հնարավոր նկատի դրանցից մեկը, ապա այդ կլինի այն ընդհանուրը, ինչ հատուկ է իրեն եւ իր հանդեպ մեղք գործողին: Նրանց համար ընդհանուր են թե՛ անգործությունը եւ թե՛ ընտրելու գործությունը: Թող ընթանա ուղիղ ճանապարհով ու թողնի ծուռ ճանապարհները, որպեսզի հասնի արդարության: Եթե մեկն Աստծոյն խնդրում է թողնել իր մեղքերը, ապա Նույնն է խնդրում նաեւ իր մերձավորի համար: Եթե Աստծուն դիմում է իբրեւ վրիժառուի, ապա Աստված նաեւ նրա (մերձավորի) դատավորն է:

Շարունակելի
Թարգմանությունը՝
Հակոբ ԷՅՈՍԵՅԱՆԻ

ԿԻՑ սեմյակում

- Պարոն Գյուրջիյան, գիտենք, որ Ձեր կյանքում մեծ դեր է ունեցել խորհրդային ժամանակների ճակատագիրը։ Դուք մեծ ակնածանք ունեք գրքի հանդեպ։ Հետաքրքիր է, իսկ ի՞նչ դեր է ունեցել խորհրդային ժամանակների ճակատագիրը Ձեր կյանքում գրքերի Գիրքը՝ Աստվածաշունչը մատյանը։

- Հիմա երեխաները լավ հնարավորություն ունեն մանկուց առնչվելու Սուրբ Գրքին՝ մուլտֆիլմերի, մանկական պատկերազարդ հրատարակությունների միջոցով, նույնիսկ աստվածաշնչյան թեմաներով «Ներկի» ինքը՝ շարք կա, ուստի մեր երեխաներն ակամա մտնում են այդ զարմահարաշ աշխարհը։

Առաջին անգամ Սուրբ Գիրքը կարդացել եմ ուսանողական տարիներին։ Անհագորեն կարդում էի եւ գրական տարբեր ստեղծագործությունների մասին վերլուծական, քննադատական գրքերում «հայտնաբերում էի», որ այս կամ այն խոսքը Սուրբ Գրքից է, այսինչ դրվագն առնչվում է Աստվածաշնչի այսինչ պատմությանը եւ այլն։ Եվրոպական գեղարվեստական երեսփոխության շատ գործեր, որ քաջ ծանոթ էին ինձ, սուրբգրային թեմաներով են... Նույնը երաժշտական շատ ստեղծագործությունների պարագայում է։ Դեռեւս հստակ չէի ըմբռնում, որովհետեւ հիմքերի հիմքը՝ Սուրբ Գիրքը, անծանոթ էր ինձ։

Սուրբ Գիրքը լիարժեք բացվեց իմ առջեւ, երբ սկսեցի զբաղվել նրանով. սոսկ ընթերցանությունը կամ ճանաչողական քայլ-

ՔՐԻՍՏՈՆԵՆԻԹՅԱՆ ԼՈՒՅՍՆ ՈՒԺ Է ՆՎՂՈՐԴՈՒՄ ՄՎՐԴՈՒՆ

Մեր հյուրն է լեզվաբան, Գեոքյան հոգևոր ճեմարանի դասախոս ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆԸ



լերը փոխարինվեցին աշխատանքով։ Դա, իհարկե, շատ ավելի ուշ էր։

Ինձ համար բացվեց մի նոր աշխարհ։ Ես արդեն ձեռագիրված մարդ էի, հստակ նկարագիր ունեի, եւ այդ նկարագրի մեջ որոշակի փոփոխություններ մտան, մտան աննկատ, ակամայից։ Ես հիմա եմ դա գիտակցում, երբ սկսում եմ ինքնավերլուծություն անել։

Ես մեջբերումներ, մերկ քարոզչություն չեմ անում, այլ ուղղակի որդեգրել եմ Սուրբ Գրքից բխող գաղափարները ու դրանք կյանքում իրագործում եմ։

- Փաստորեն աստվածային Լույսը, որն արդեն կրում էիք Ձեր հոգում, անդրադարձավ Ձեր հետագա կյանքի վրա։ Այդպե՞ս է։

- Այո՛, այդ Լույսը, պատկերավոր ասած, առաջնորդում է։ Դա հզոր Լույս է եւ ճիշտ ուղիներ է ցույց տալիս։ Չեմ ուզում ասել նաեւ, որ վերջին տասնհինգ տարում իմ գործունեությունը զգալի չափով կապված է Աստվածաշնչին՝ Ս. Գրքի հրատարակմանը, ասենք՝ արեւմտահայերենից փոխադրում արելու հայերենի արդիականացում, խմբագրական աշխատանք եւ այլն։ Տասնյակ գրքեր կարելի է հիշատակել, որոնցում ես այս կամ այն մասնակցություն ունեմ. դրանք տարբեր տարիքի մանուկների համար հրատարակություններ են, Նոր Կտակարանի, Սաղմոսագրքի իմաստային թարգմանություններ-

ը, գրաբար Աստվածաշնչի համաբարբառը եւ այլն։

Այդ աշխատանքն ուղղակի հաճույք է։ Դու թե՛ աշխատում ես, թե՛ հաճույք ստանում՝ ամեն բանի, պատկերի, գաղափարի մասին խորհրդածելով, համեմատելով նախորդ հրատարակությունների հետ, փորձելով գտնել այն միջոցը, որով սուրբգրային այս կամ այն հասկացությունը, գաղափարն ավելի դյուրին կհասնեն ընթերցողին։ Իսկ ընթերցողները տարբեր են՝ մանչուկից մինչեւ կյանքի մայրամուտին հասած մարդիկ։

- Պարոն Գյուրջիյան, Դուք դասավանդում եք Գեոքյան հոգևոր ճեմարանում եւ Վ. Բոյունովի անվան պետական լեզվաբանական համալսարանում։ Պարզ է, որ Դուք սոսկ գիտելիք չէ, որ փոխանցում եք Ձեր ուսանողներին, այլեւ կամա թե ակամա նրանց եք փոխանցում Ձեր հոգում անթելված լույսը, Ձեր մարդկային հատկանիշները։ Հետաքրքիր է՝ ինչպիսի՞ արդյունքներ եք տեսնում այս առումով։

- Յուրաքանչյուր գործ, եթե անում եմ, սիրով եմ անում։ Դասավանդումն էլ եմ սիրով անում եւ իմ աշխատանքի դիմաց վարձատրույց եմ լինում նույնպիսի սիրով։ Շատ տարիներ անց ես լսում եմ երախտագիտության խոսքեր, կարծիք, որ միայն գիտելիք չեմ փոխանցել, այլ ձեռավորել եմ մարդուն։ Դա մանկա-

վարժի աշխատանքի ամենակարգաբար գնահատականն է։ Իսկ դասախոսը վերջին հաշվով ուսուցիչ է։ Պատահական չէ, որ ճեմարանում մենք մեզ հաճախ ուսուցիչ ենք անվանում, որովհետեւ սոսկ գիտելիք փոխանցող չենք. մենք մարդ ենք ձեռավորում, մարդ, որը բարեկիրթ է, գիտակ, պատրաստ է դիմացինին հասկանալու եւ օգնելու, շերտություն հաղորդելու, ներդրության մեջ գտնվողի կողքին կանգնելու եւ սատարելու, ճշգրտվածին չանտեսելու, ընկածին բարձրացնելու եւ այլն։ Իմ ուսանողներից ոմանք ըմբոստ են, անհաշտ՝ անարդարությանը։ Եվ դա ուրախացնում է ինձ։ Ես չեմ կարող լռել, երբ անարդարություն եմ տեսնում. չե՛ որ քրիստոնեությունն արդարության քարոզիչ է։

Գոհ եմ իմ աշխատանքից, գոհանում եմ, երբ ստանում եմ աշխատանքիս գնահատականը։

- Ըստ Ձեզ՝ ո՞րն է մարդուն մարդ պահող այն կարեւոր հատկանիշը, որի կրողը պիտի լինի յուրաքանչյուր մարդ։ Գուցե դրանք մի քանի՞սն են։

- Կառանձնացնեի ազնվությունը, բարությունը, արդարամտությունը։ Դրանք կարեւոր հատկանիշներ են։ Բարի մարդը չի կարող չար բան անել, ազնիվը չի խաբի, արդարամիտն անարդար գործեր չի անի։ Մեր հասարակության մեջ ամենամեծ խնդիրն արդարության, բարության, սիրու պակասն է։ Եթե մենք կարողանանք դրանք սերմանել առողջ սերնդի մեջ, կունենանք լավ հասարակություն, որում ապրելը հաճելի կլինի։

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Թափալցյանի եւ Գալշոյանի վեպերը նվիրված են հանրապետության անմշակ վայրերում նոր հիմնադրվող գյուղերի ու ավանների պատմությանը։ Թափալցյանի վեպում պատկերված է Հայրենաշեն պետական տնտեսության, իսկ Գալշոյանի վեպում Հակիկթ ավանի հիմնադրման ու կառուցման ընթացքը, որը, վերջինիս բնութագրմամբ, նոր միջավայրում մարդկանց նոր հարաբերությունների ձեռագիրն է միջավայրի մեջ միավորվելու մի «բովանդակ» է։

Նյութի յուրացման տեսակետից առանձնանում է հատկապես Գալշոյանի վեպը։ Գյուղաշխարհի մարդիկ են վեպի հերոսները, որոնց գործունեության եւ փոխադարձ ճանաչողության հիմնական կապերն ստեղծվում են աշխատանքային առօրյայի ընթացքում։ Հեղինակը ոչ թե միագիծ հունով է զարգացնում գործողությունները՝ ընտրելով մեկ կամ երկու գլխավոր հերոս, այլ ճյուղավորվող ու համադրական ընթացքով։

Վեպում չկան գլխավոր եւ երկրորդական, դրական ու բացասական հերոսներ։ Բոլոր հերոսներն էլ կարելի է ասել ամբողջությամբ ներկայացնում են գյուղական կյանքի բնորոշ բնավորություններ։ Նա չի կտրում մի հերոսի իր շրջապատից ու իդեալականացնում կամ հակառակը՝ նրա մեջ խտացնում բացասական հատկանիշներ։ Ներկայացվող կյանքի պատկերը հեղինակը դիտում է ամբողջական ընդգրկումով եւ ի մի բերում բոլոր այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք կատարվում են գյուղում։

Վեպի կառուցվածքը հատկանշվում է մի կողմից՝ իրական տարբեր վիճակների կտրուկ անցումներով ու համադրությամբ, մյուս կողմից՝ ժամանակային տարբեր փուլերի հերթագայությամբ ու միահյուսմամբ։ Հերոսներին նա ներկայացնում է թե՛ ներկա որեւէ վիճակում ու գործողության մեջ եւ թե՛ անցյալի ոգեկոչումով՝ արդեն ապրած կյանքի հիշողությամբ։ Ժամանակային տարբեր կտրվածքների մեջ հերոսներին ներկայացնելիս հեղինակը մեծ կարեւորություն է տալիս ներքին խոսքին։

Թե ինչպիսի՞ մարդիկ են վեպի հերոսները եւ ամբողջությամբ ի՞նչ առանձնահատուկ գծերով են բնութագրվում, երեւում է իրենց իրենց մեջ եւ միմյանց հետ կերպարների ունեցած կապերի ամբողջությամբ։

Բազմաթիվ կերպարում կիզակետված է վեպի հիմնական ոգին՝ աշխատանքը։ Անմշակ որձաքար հիշեցնող անխաթար նկարագրի տեր մարդ է նա, որ իր կյանքի նպատակը տեսնում է ուժերի լրիվ ծախսում մեջ։ Սանթրոն եւ պառավ Չանանն ամեն առիթով ոգեկոչում են իրենց անցյալը, այդ անցյալից անընդհատ պեղում նոր պատկերներ, անցքեր, իրադարձություններ եւ այդ ամենով իմաստավորում ներկան։ Հարուստ բնավորություն է Արման, որն օժտված է սկզբունքային, ազնիվ գծերով։ Արմային գուզընթաց հեղինակը կերտում է նաեւ նրա գոհված հոր կերպարը։ Արմայի հայրը դարձյալ անցյալի ծայրն է, որ ապրում է որդու մեջ եւ նրան սովորեցնում կյանքի դասերը։

Վեպը համադրվում է նշված եւ չնշված բոլոր հերոսների անմիջական գործողու-

թյուններով, հարաբերություններով, վերհուշերով։ Աշխատանքային առօրյան, որով իմաստավորվում է հերոսների կյանքը, դառնում է մարդկանց միավորող հիմնական ուժը եւ կյանքի գեղեցկության չափանիշը։

Ի տարբերություն Թափալցյանի եւ Գալշոյանի վեպերի, որոնցում որոշակի ժամանակն ու կյանքի փուլն են դառնում վիպական պատմի նյութ, Ա. Սահինյանի «Կարոտ» վեպում պատկերված է խորհրդային հասարակարգի տեսական մի ժամանակաշրջան՝ կոլեկտիվացումից մինչեւ դրան հաջորդող գրեթե երեք տասնամյակները։ Հեղինակն իր հերոսների գործունեությամբ քննում է գյուղում սոցիալիստական հասարակարգի ձեռավորման, պատմական զարգացման, երկրի արտադրական, տնտեսական վերակառուցման ընթացքը։ Վիպական գործողությունների կենտրոնում Սուրենի եւ Մարոյի կերպարներն են, որոնք կրել են խորհրդային հասարակարգի սխալների ամբողջ ողբերգական հետեւանքները։ Սուրենը, որը եղել է նվիրված կոմունիստ, կոլեկտիվ տնտեսության կազմակերպիչ, շատերի պես անմեղ տեղը գրպարտվել է եւ աքսորվել։ Այնուհետեւ՝ պատերազմ, գերություն, բայց նաեւ գերության մեջ պայքար ֆաշիստների դեմ, փախուստ գերությունից, պարտիզանական գործունեություն։ Թվում է, թե մարդն արել է այն ամենը, ինչ կարող էր, բայց եւ վերստին կասկածներ, դարձյալ անմեղ մարդուն վերագրվող հայրենիքի դավաճանի ծանր մեղադրանք եւ հերթական աքսոր։ Սուրենը եւ նրա նմանները հասարակարգի արտադրողներն են, բայց նաեւ այդ ա-



րատների կատարածությունները, քանի որ իրենք էլ երբեմն իրենց գործունեությամբ հեռու չեն եղել այն սխալներից, որոնց գոհ են գնացել հենց իրենք։ Նրանք էլ, սխալների դեմ չպայքարելով, ավելին, կարծելով, թե դա է միակ ճանապարհը, ստեղծել են իրենց գոհերին։

Սահինյանի վեպը, ըստ էության, սոցիալիստական հասարակարգի կառուցման պատմությունն է՝ բեկված մարդկային ճակատագրերի մեջ։ Սակայն սա վեպ է որպես իդեալ, որովհետեւ կատարումը պարզունակ շարադրանք է՝ նկարագրական-արձանագրական նաղլապատում։ Հեղինակը շատ հեռու է ժամանակակից վեպի ու ժամանակակից վիպական մտածողության պատկերացումներից։ Պոռնոյանի կաղապարով նոր վեպ չի գրվի։

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Սկիզբը՝ էջ 5

Ինչպես երեւում է Վարդան Մամիկոնյանի ճառից, Հայոց ուխտապահ իշխանները, անկախ իրենց տոհմային պատվոգահից եւ գրաված դիրքից, անվերապահ ճանաչում էին Մամիկոնյան տոհմի սպարապետության ժառանգական իրավունքը եւ Ավարայրի ճակատամարտից առաջ միահամուռ ընտրեցին Վարդան Մամիկոնյանին որպէս Հայոց ազատագրական բանակի առաջնորդ եւ գորագլուխ:

Սակայն անցնենք առաջ: Շահապիվանի ժողովի մասնակից 40 (Խ) գլխավոր եպիսկոպոսների թիվն իրավամբ տարակույսներ է պատճառել Ն. Ակինյանին, այն ուղղակի չափազանցված է եւ աղավաղված 20 (Ի) թվից, որը լիովին համապատասխանում է

դրան հաջորդած Արտաշատի ժողովի մասնակից եպիսկոպոսների թվին, որոնք 18-ն էին: Շահապիվանի ժողովի մասնակից եպիսկոպոսներից Ակինյանը ստույգ ճանաչում է միայն երկուսին՝ Տաճատ եւ Գադ, եւ նրանց նույնացնում 450 թ. Արտաշատի ժողովի համանուն մասնակիցների հետ՝ Տաճատ եպիսկոպոս Տայոց եւ Գադ եպիսկոպոս Վանանդա (Եղիշէ, էջ 28, Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի, Տիփլիս, 1904, դր. Բ, ԻԳ, էջ 44): «Իբրեւ եպիսկոպոս կը նշանակուին, առանց թեմի. Ղազար, Տաճատ, Արտակ, Գադ, Եփրեմ: 450ին ստոյգ է կը յիշուին Տաճատ եպիսկոպոս Տա-

ՈՎԵՐ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱՆՁԱՅՈՒՅՑ ԴԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

յոց եւ Գադ եպիսկոպոս Վանանդայ, բայց անծանօթ կը մնան միւս երեք անունները: Եթէ այս անունները հանուած ըլլային ժողովին արձանագրութենէն, առանց տարակուսի պիտի յիշուէին անուններու կից թեմերն ալ» (Ն. Ակինեան, թիւ 4-12, էջ 90-91) - այստեղ Ակինյանը բացահայտ հակասում է ինքն իրեն: Իրականում այդ անունները ոչ հետագա ժողովների եւ ոչ իսկ Արտաշատի ժողովի ցուցակներից չեն հանված (կարդա՝ մուծված), այլ եղել են հենց Շահապիվանի ժողովի արձանագրության բուն սկզբնական բնագրում, եւ Ակինյանի փաստարկն էլ թեմերը, ավելի ճիշտ՝ վիճակները (5-րդ դարի հայ մատենագրության մեջ դրանք թեմեր էին կոչվում, այլ՝ վիճակներ - հմմտ. հոր., ... (Բրքիշոյ) յափշտակութեամբ վախճանեցելոցն (եպիկոպոսաց) վիճակաց վարեալ ամս երիստ - «...բայց ի Սուրմակայն յայնմանէ, գորոյ եւ մեծացոյց (Շամուել) իսկ գլիճակն» (Գ, ԿԴ, էջ 349 եւ ԿԶ, էջ 354) պարտադիր հիշելու մասին, հերքվում է իր իսկ նշած Տաճատ եւ Գադ եպիսկոպոսների օրինակով: Դրանց եւ կավելացնել նաեւ երրորդը - գլխավոր եպիսկոպոսներից առաջինի Ղադ

(սեռ.՝ Ղադայ), մյուս ձձ.՝ Ղոդայ) (Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, ծանոթ., էջ 629) անունը, որ Ա. Մխիթարյանի, Ղ. Ալիշանի, Օրմանյանի եւ Ակինյանի հղած ցուցակներում առկա է Ղազար ձեռով, եւ ուղղում եմ՝ Եւդադ, որը նույնպես մասնակցել է Արտաշատի ժողովին՝ Եւդադ եպիսկոպոս Մարոյաղույ (Եղիշէ, էջ 28) եւ առկա է միայն Եղիշէի ցուցակում (Եղիշէ, էջ 28), բայց ոչ՝ Փարպեցու: Այս երեքն էլ Արտաշատի ժողովում հիշատակվում են իրենց Տայոցի, Վանանդի եւ Մարդաղի վիճակներով, բայց հակառակ Ակինյանի ենթադրության՝ 444 թվի ժողովի Նախադրության մեջ հիշված են առանց այդ վիճակների: Սրանցից անծանոթ են միայն Արտակ եւ Եփրեմ եպիսկոպոսները:

Այսուհետեւ Ակինյանի ցուցակում հաջորդում են 8 գլխավոր երեք՝ Յովսեփ, Յոհան, Մեղիստ, Երեմիա, Ասպուրակես, Դանիել, տեղ Դեմոն, տեղ Եղիշէ (Ն. Ակինեան, թիւ 4-12, էջ 91): Այդ շարքում առաջինը նշված են գլխավոր երեքներ՝ Յովսեփ եւ Յոհան, որոնք անկասկած Մաշտոցի Վարքի վերջնամասում Կորյունի հիշատակած ժողովի գլխավորներ Յովսեփ եւ Յովնան տեղապահներն են. «Եւ գլխաւորս, վե-

րակացուս, տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց, որոց առաջինն Յովսեփ, գլխաւոր ժողովոյն, եւ երկրորդն այլ աշակերտ՝ Յովհան անուն...» (Կորյուն, էջ 96, հատվ. ԻԷ): Չորրորդ գլխավոր երեքը՝ Երեմիան, դարձյալ ըստ Կորյունի, ս. Սահակի ձեռնասուն աստվածասեր պաշտոնյաների գլխավորն է՝ այդ սուրբ եւ բարեպաշտոն, որը մասնակցում էր նրա հուղարկավորությանը (Կորյուն, էջ 88, հատվ. ԻԴ): Այս երեքի հետ Ակինյանը ցուցակում եղած տեղ Դեմոնին եւս նույնացնում է Կորյունի հիշատակած Դեմոն երեքի հետ, իսկ մնացած չորս երեքներին՝ Մեղիստ, Ասպուրակես, Դանիել, տեղ Եղիշէ, համարում է անծանոթ, թեւեւ ինքն էլ անմիջապէս նշում է. «Ղ. Փարպեցի գիտէ Մեղիստ եպիսկոպոս Մանձկերտոյ, եւ Եղիշէ (ճիշտ է՝ տեղ Եղիշէ - Ա. Մ.) Ամատունեաց եպիսկոպոս, որոնք ներկայ էին 450ի Արտաշատի ժողովին»: Մեղիստ երեքը 454 թ. Պարկաստանում Յովսեփ կաթողիկոսի նահատակվելուց հետո դարձավ Հայոց կաթողիկոս (Փարպ., Գ, ԿԲ, էջ 110): Ասպուրակես եւ Դանիել երեքներ չեն հիշատակվում 440-ական եւ հաջորդ թվերի ոչ մի հիշատակարանում:

Շարունակությունը՝ էջ 8

Հայ կնո՞ւ ղափկերումն օտարազգի գրողների երկերում

Սկիզբը՝ էջ 3

Քրիստան Բերքլիի համալսարանում արժանացել էր կերպարվեստի մագիստրոսի կոչման: Ասվածից մենք կարող ենք եզրակացնել, որ հայ կնոջ մասին եղած կարծրատիպ-պատկերացումները, համաձայն որոնց հայուհիները լոկ ունակ են իրենց օջախները վառ պահելու եւ հավատարմորեն ծառայելու իրենց ընտանիքներին՝ չհնտեգրվելով հասարակական կյանքի այլ ոլորտներին (մշակույթ, գիտություն եւ այլն), այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը: Այս նույն ճշմարտության մասին է գրել նաեւ Ջոնաթան Շվարցը իր «Հեռավոր կանգառներ» գրքում (Schwartz J., Distant Stations. Doubleday, New York, 1979): Գրողն իր երկում կերտում է հայ կնոջ մի նոր կերպար. խոսքը Լեքսինգթոն պողոտայում ապրող Լիլիան Ավագյանի մասին է, որն իր ողջ կյանքը նվիրաբերել է արվեստին: Նա երաժշտություն է դասավանդում Կոլումբիայի հանրահայտ համալսարանում: Այժմ վերադառնալու Իվան Գոուլդի «Հիվանդ ընկերներ» գրքի հայազգի հերոսուհու կերպարին: Ձեյսոնը շուտով հասկանում է, որ ինքն իրապես եգալի կնոջ է հանդիպել: Կյանքը պարզապես հորդում է Քրիստայից, ասենք ավելին՝ նա հրաշալիորեն վիուկանման է: Քրիստան սիրառատ է եւ օժտված անսահման կանացիությամբ: Իվան Գոուլդի վեպի հերոսուհու բնութագիրը լիարժեք դարձնելու համար հարկ է հավելել, որ նա Նախանշում է այսօրվա ազատականացված կնոջ կերպարը: Վերջինս առաջնորդվում է իր զգացմունքների թելադրանքով եւ բնագոյային պահանջմունքներով ու ոչ թե հասարակական կանոններով կամ սառը տրամաբանությամբ: Ահա հենց այս հատկությունների շնորհիվ է Քրիստա Սարգսյանը չափազանց գրավիչ թվում Ջեյսոնին:

Ընթերցելով օտարազգի գրողների ստեղծագործությունները՝ կարելի է մի հետաքրքիր եզրակացության հանգել՝ կապ-

ված հայ կնոջ արժեհամակարգի եւ բարոյական նկարագրի հետ: Պարզվում է, որ հեթանոսական եւ քրիստոնեական ժամանակաշրջաններում ապրած հայ կանայք շեշտակիորեն տարբերվում են մեկմեկուց: Խոսքը հատկապես վերաբերում հայ կնոջ բարոյական կերպարին: Եթե հավատանք անգլիացի գրող Ջ. Ա. Զարոնին, ապա հեթանոսական շրջանի հայ աղջիկները, լի-դիացի եւ ետրուսկ աղջիկների պես բավականին ազատ բարքերի տեր էին, եւ նշված իրողությունն այդ վաղնջական ժամանակներում բնավ էլ ամոթալի ու պարսավելի երեւոյթ չէր համարվում (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 129-130): Քրիստոնեության ընդունումից հետո իրավիճակն էապես փոխվեց: Հայ հոգեւոր այրերը քրիստոնեական հավատի ներմուծումից ի վեր հայ ժողովրդի մեջ հետեւողականորեն սերմանում են բարձր բարոյական սկզբունքներ, համառորեն քարոզում մարմնական ու հոգեկան մաքրություն: Ինչպես հայտնի է պատմությունից, քրիստոնյա եկեղեցականների քարոզները տվեցին իրենց բաղձալի պտուղները. հայ կինը դարձավ շատ ավելի անաղարտ, քան հեռավոր անցյալում էր: Հոգեկան եւ ֆիզիկական մաքրությունը դարձավ ճշմարիտ հայ աղջկա կարեւորագույն առաքիլությունը: Այստեղ ավելորդ չենք համարում հիշել հայոց ցեղասպանության շրջանում ապրած հայ աղջիկներին ու կանանց, ովքեր գերադասում էին ինքնասպանություն գործել, բայց չորվել իսլամադավան թուրքերին: Ու թեեւ ինքնասպանությունն ինքնին քրիստոնեության մեջ մեծագույն մեղք է համարվում, սակայն հայուհիների զգալի մասը նախընտրում էր գործել այդ ծանր մեղքը՝ սեփական բարոյական մաքրությունը պահպանելու համար: Իսկ արդյո՞ք հայ կնոջը հաջողվեց պահպանել իր վեհ բարոյական սկզբունքները Սփյուռքի պայմաններում, Խորհրդային Հայաստանում եւ ապա անկախ Հայաստանում: Այս հարցը, անշուշտ, չի կատարող ունենալ միանշանակ պատասխան:

Բանն այն է, որ երբ մարդն ապրում է տարբեր էթնիկական ու մշակութային միջավայրերում (ամերիկյան, եվրոպական, մերձավորարեւելյան, ռուսական եւ այլն), ապա նա, կամա թե ակամա, տարիների ընթացքում փոխվում է կա՛մ դեպի լավը, կա՛մ էլ՝ դեպի վատը: Այսպես օրինակ՝ Խորհրդային Հայաստանում իշխում էին կովկասյան խիստ աղաթները եւ խորհրդային բարոյական սկզբունքները: Ու թեեւ այդ ժամանակաշրջանում Հայ Առաքելական Եկեղեցին ցավալիորեն երկրորդ պլան էր մղվել, սակայն խորհրդահայ կինը կարողացավ պահպանել իր բարոյական վեհությունը, որը ժառանգել էր իր նախնիներից: Ինչ վերաբերում է ամերիկաբնակ ու եվրոպաբնակ հայ կանանց, ապա այստեղ՝ հայ գաղթօջախներում, անկասկած, որոշակի պայքար է մղվում Արեւմուտքի անբնագրոս բարքերի ու սովորույթների դեմ, սակայն ակնհայտ է, որ արեւմտյան արժեքները սփյուռքահայ երիտասարդությանն առավել անկաշկանդ ու ազատական են դարձրել: Իսկ ի՞նչ կարելի է ասել Մերձավոր Արեւելքում ապրող սփյուռքահայ կանանց մասին: Անշուշտ, այստեղ զգացվում է Արեւելքի եւ իսլամական միջավայրի ազդեցությունը. այսինքն՝ այս տարածաշրջանում գերիշխում են դարերի խորքից եկած տաբուները, որոնք անխուսափելիորեն իրենց կնիքն են դրել տեղաբնակ հայ կանանց կերպարի վրա: Այստեղ կարելի է որոշակի զուգահեռներ անկացնել խորհրդահայ եւ Մերձավոր Արեւելքում բնակվող հայ կանանց միջեւ: Իսկ ի՞նչ կարող ենք ասել ռուսաստանաբնակ հայ կանանց մասին. հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռուսական միջավայրը եվրոպական եւ ամերիկյան միջավայրերի պես աչքի է ընկնում բարքերի ազատականությամբ, ապա սա, բնականաբար, չէր կարող որոշակիորեն չանդրադառնալ ռուսաստանաբնակ հայ կնոջ եւ հատկապես հայ երիտասարդության վարքագծի ու պահվածքի վրա: Ազատականացման որոշակի միտում է նկատ-



Գործ՝ Ալ. Գրիգորյանի

վում նաեւ նորանկախ Հայաստանում: Սա, անկասկած, բնականոն գործընթաց է՝ կապված հասարակական-տնտեսական ֆորմացիայի փոփոխության եւ արեւմտյան մշակութային էքսպանսիայի հետ: Ասենք ավելին՝ առնվազն տարօրինակ կլիներ, եթե ժամանակակից հայ կինն ունենար ճիշտ նույն արժեհամակարգն ու վարքագիծը, որ ունեին խորհրդահայ կամ, առավել եւս, Նախախորհրդային շրջանի հայ կանայք: Թեեւ «բարքերի ազատականացում» հասկացությունը բացասաբար է ընկալվում հայ հասարակության առավել ավանդապաշտ ու պահպանողական հատվածի կողմից, սակայն ժամանակակից կյանքի պայմաններում, երբ մարդկությունն անշեղորեն ընթանում է համաշխարհային ինտեգրացման ուղիով, բնավ դյուրին չէ միանշանակ պնդել, թե արդյոք բարքերի ազատականացումը նշավակելի՞ երեւոյթ է, թե՞ ո՛չ: Անհրաժեշտ է մշտապես հիշել, որ մենք արդեն մուտք ենք գործել XXI դար, որն ինքնին շաղկապվում է «նոր մտածելակերպ», «առաջադիմություն», «ազատություն եւ ընտրության իրավունք» հասկացությունների հետ:

Շարունակությունը՝ էջ 8

ՔՐԻՍՏՈՆՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԱՆ ՈՒԺ Ե ՆՎՂՈՐԴՈՒՄ ՄԱՐԴՈՒՆ

Սկիզբը՝ էջ 6

- Ո՞րն էք համարում ներկայիս հասարակության մեծագույն արատը, չարիքը, որը կենդանու, շատում է ազգը:

- Մի վատ հատկանիշ կա (ինձ համար այն առաջին տեղում է). ստրկամտությունը, մարդկային արժանապատվության պակասը կամ բացակայությունը:

Խոսք կա՝ «Մարդը բնության զարդն է»: Մարդն ստեղծվել է Աստծո պատկերով եւ նմանությամբ. մարդն Աստծու ստեղծագործության զգալի մասն է: Նա պետք է լինի բարձր եւ վեհ: **Ստրկամտությունը, արժանապատվության պակասը ոչնչացնում են մարդուն:** Մեծագույն չարիք է նաեւ անտարբերությունը, անհաղորդ վիճակը, երբ տեսնում ես, որ մեկին անարդար մեղադրում են, ճշում, պատժում, պիտի համարձակորեն մեջտեղ գաս ու պաշտպան կանգնես թույլին, տկարին կամ այն ուժեղին, որը քո օգնության կարիքն ունի: Դա իմ հստակ դիրքորոշումն է, որն այլեւս փոփոխության ենթակա չէ: Եթե ուզեմ էլ, չեմ կարող փոխվել, չեմ կարող անտարբեր լինել. ես այդպես եմ ձեւավորված:

- **Մեզանում խոր արմատներ գցած անտարբերությունը գուցե վախի մթնոլորտի կամ վիճակի փոխելու անկարողության հետևանք է:** Ի՞նչ կասեք:


- Մեկ Մարդն աշխարհի փոխեց. Աստծու Որդին եկավ եւ արմատապես փոխեց աշխարհի եւ մարդկության զարգացման ընթացքը: Մարդկությունն արդեն երկու հազար տարուց ավելի այլ ընթացք ունի: Եթե ամեն մեկն այդ գիտակցությունն ունենա, ամեն մեկն իր տեղում անի այն, ինչ կարող է, ձեռ-

բանաստեղծը կասեր, «պատե՛շին վրա»: Ես իմ խոսքն ունեմ ասելու եւ իմ անձնական օրինակը տալու երիտասարդներին՝ անսասան կանգնելու, աներեր լինելու եւ երբեք չկորցնելու լավատեսությունը ապագայի հանդեպ:

- **Պարոն Գյուրջիսյան, չե՞ք կարծում, որ եթե այսօր կարողանայինք ավետարանական պատգամներն իրագործել մեր կյանքում, ապա կունենայինք քրիստոնեական չափանիշներով առաջնորդվող հասարակություն:**

- Երբ կարդում եմ օրվա լուրերը (դրանք հաճախ սահմանեցուցիչ են), իմ մտքում երբեմն հնչում է հետեւյալ հարցը. «Մի՞թե այս 1700 տարին մեր ժողովրդին այսպիսին է թողել, կամ ինչո՞ւ ենք այսպիսին դարձել»: Եթե մարդիկ առաջնորդվեին պատվիրաններով, մենք չէինք ունենա այս արատավոր երեւոյթները: Մերձավորին չեն սիրում, միմյանքից խուսափում են ասում եւ բարի գործեր չեն անում... Եթե առաջին դեմքերը, ղեկավարներն իրենց բարոյական արժեքները ձեւավորած լինեին քրիստոնեական հիմքերի վրա, առաջնորդվեին պատվիրաններով, ապա չէինք ունենա այդ համատարած թալանը, խաբեությունը, ստորագումները, սիրո պակասը, չարությունը, որը երբեմն ուղղակի դաշված է մարդկանց դեմքերին: Այսօր փողոցով քայլելիս ժպտացող, բարի դեմքեր քիչ ենք տեսնում:

Այսօր հսկայական աշխատանք կա անելու ողջ հասարակության մեջ, բայց իմ հույսը մանուկներն են, որոնք հենց սկզբից պիտի ձեւավորվեն բարձր արժեքներով:



քերը ծալած չնստի, ապա մենք կարող ենք մեր երազած կամ երազածին մոտ հասարակությունն ունենալ: Մարդն ուժեղ էակ է, իսկ երբ նա ոչինչ չի անում, թույլ է անգոր է:

Քրիստոնեության Լույսն ուժ է հաղորդում: Ոմանք այդ ուժը չեն գիտակցում եւ մտածում են, որ իրենք հանգիստ, խաղաղ, մեկուսի կման, ու ամեն ինչ կլավանա: Ո՛չ, պետք է գործել: Սա գործողություն, ընթացք, պայքար է: **Հանուն արդարության պայքարը քրիստոնեական պայքար է:** Քրիստոնյան ուժեղ մարդն է, թեւէ կա թուր կարծիք, սխալ ընկալում այս առումով: Միայն ուժեղ մարդը կարող է լինել ներողամիտ, խոնարհ, անհիշաչաք: Քրիստոնեությունը հանուն արդարության պայքարի առաջամարտիկ, դրոշակակիր է:

- **Պարոն Գյուրջիսյան, այսօր ամեն ինչ արժեզրկվում է. արժեզրկվում է նաեւ խոսքը, որը մեզ բոլորիս միմյանց կապող ամենապինդ շաղախը պիտի լինե:** Ի՞նչ կասեք այս առումով:

- Հզոր ուժ է լեզուն, հզոր ուժ է խոսքը: Հիշեցինք Քրիստոսին. Նա ինչպե՞ս հաղթեց՝ Խոսքի ուժով: Խոսքն էր, որ կարողացավ սկզբում քչերին, հետո շատերին, հետո միլիոնավորներին տանել իր հետեւից: Այսօր մենք սիրով ասված խոսքի, ճշմարիտ Խոսքի կարիք ունենք: Հասարակությունն սպասում է այդ առաջնորդող խոսքին, այն խոսքին, որը կհամախմբի մարդկանց, գործի կմղի, հավատ կներշնչի, որ իրենք կարող են փոխել իրենց կյանքը: Երբ այսպես կոչված «ներքին մարդը» այդ Խոսքի շնորհիվ վերափոխվի, կփոխվի նաեւ նրա գործելակերպը: Ես այդ հույսը, ակնկալիքն ունեմ, հավատում եմ, որ կգա այդ օրը: Երբեմն փորձում են ինձ լռեցնել, ճնշել, իմ խոսքի ուղղությունը փոխել, բայց ես մնում եմ այսպիսին, ինչպես սփյուռքահայ

- **Դուք Ձեզ երջանիկ մարդ համարո՞ւմ եք:**

- Ես երջանիկ մարդ եմ, որովհետեւ երջանկության հիմքերն ունեմ: Դա եղել է տեւական աշխատանք, ջանք, երբ դու քեզ վերակերտում, վերանորոգում ես, մարդկանց հետ հարաբերություններն ես ճիշտ ձեւավորում: Ունեմ լավ աշխատանք, լավ ընտանիք, շրջապատումս մարդիկ են, որոնց հետ հաղորդակցվելն ուրախություն է պատճառում ինձ: Մյուսներին ես ուղղակի հեռացնում եմ ինձից...

Գոհ եմ իմ կյանքից. **իմ իրականության մեջ ես ուրախ եմ ապրում, որովհետեւ հոգիս խաղաղ է:** Ուրիշի համար անշնան թվացող բանն ինձ ուրախություն է պատճառում, օրինակ՝ ուսանողի հաջողությունը, ընկերոջ բարձրանալը...

- **Իսկ Ձեր բարությունը հաճախ են չարաշահում: Եղե՛լ են նման դեպքեր:**

- Անշո՛ւշտ, բազմիցս իմ բարությանը պատասխանել են չարությամբ, ստորությամբ, դավաճանությամբ, թիկունքից են հարվածել: Դա ինձ դառնացրել է, գուցե նաեւ չարացրել, բայց ինձ չի փոխել: Ես այդ մարդկանց մեկ երկու, երեք անգամ ներելուց, հնարավորություն տալուց հետո հրաժեշտ եմ տվել եւ շարունակել իմ խաղաղ ընթացքը: Չեմ կարող մերժել մարդուն, որն իմ օգնության կարիքն ունի: Օգնում եմ, բայց եթե մարդն ապերախ է, ապիկար, դա միայն ցավակցություն կարող է առաջացնել իմ մեջ: Ջանք եմ թափում նրան փոխելու համար: Երբեմն հաջողվում է, երբեմն՝ ոչ: Տխրում եմ, որ մարդիկ այդպիսին կարող են լինել:

Բայց կյանքը չի ավարտվում: Այնքան լավ մարդիկ կան աշխարհում, որոնք մենք չենք ճանաչում: Ու մի օր էլ հանդիպում ենք մեկ ուրիշ լավ մարդու: Կյանքը շարունակվում է:

Հյուրընկալեց Ամմելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՈՎԲԵՐ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱՆՁԱՅՈՒՅԳ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 7

Ն. Ակիսյանն անբնական է համարում նաեւ Ղեւոնդ եւ Եղիշե երեցներին տրված «տեր» տիտղոսը՝ դիտել տալով, որ «տեր» տիտղոսն այդ շրջանում հատկացված էր եպիսկոպոսներին (*Ն. Ակիսեան, թիւ 4-12, էջ 91*): Բայց քանի որ այդպես է նաեւ Ղ. Փարպեցու ցուցակում, ապա հարկ է ենթադրել, որ հետագայում որեւէ խմբագիր այս Եղիշե երեցին կոչել է տեր Եղիշե (*սեռ. տեառն Եղիշեի*)՝ նույնացնելով նրան Փարպեցու հիշատակած համանուն եպիսկոպոսի հետ - «...տեր Եղիշե՝ Ամատունեաց եպիսկոպոս» (*Փարպ., Բ, ԻԳ, էջ 45*):

Այս ամենից Ն. Ակիսյանը գալիս է կտրուկ հետետւթյան. «Նախադրութենէն դուրս հանելով այս ներմուծեալ տեղիքները՝ կը ստանանք քիչ շատ սկզբնագրին հարազատ բնագիր մը, որուն կրնանք անվարան հետեւիլ» (*Ն. Ակիսեան, թիւ 4-12, էջ 91*): Եվ Ակիսյանը հենց այդպես էլ վարվել է. իր ուսումնասիրության վերջում հրապարակելով Նախադրության բնագիրը (*Ն. Ակիսեան, թիւ 4-12, էջ 142-145*)՝ նա անվարան հեռացրել է շարադրանքից բոլոր կոնկրետ տվյալներն ու անձանունները՝ դրանք գետեղելով էջատակի ծանոթագրության մեջ, այսինքն՝ Նախադրության շարադրանքից առանձնացրել է ամենաարժեքավոր հիշատակները՝ ըստ Եղիշեի հանգեցված Հովհան Օձնեցու խմբագրած բնագրին:

Ցավոք, Ակիսյանի այս խիստ վիճահարույց եզրակացությանը անվերապահ համամիտ է նաեւ Հայոց Կանոնագրի համահավաք բնագրերի հմուտ դասդասող եւ երախտաշատ հետազոտող Վազգեն Հակոբյանը, որն աչքի առաջ ունենալով ժողովի ընդարձակ արձանագրությունը եւ Նախադ-

րությունը՝ մատնանշում է. «Առաջին եւ երկրորդ խմբագրությունների մեջ հիշված մի շարք անձանունները, ինչպես ճիշտ նկատել է Ն. Ակիսյանը (*Հանդես Ամսօրեայ, 1949, թիվ 4-12, էջ 90-91*), հետագայի մուծում են եւ կապ չունեն առաջաբանի սկզբնական բնագրի հետ» (*Կանոնագիրը Հայոց, հտ. Ա, ծանոթ., էջ 629*): Չափազանց աներկբա եւ անհիմն է ասված:

Սակայն Նախադրության վերաբերյալ եղել են նաեւ որոշ, թեւէ վեհերոտ, դրական արձագանքներ. այսպես՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը «Հայոց Եկեղեցու պատմութիւն» աշխատության մեջ, անդրադառնալով Շահապիվանի ժողովին, գտնում է, որ թեւէ Նախադրությունը «ժամանակի գործ չէ եւ զանազան ձեռագրերում զգալի տարբերութիւններով է աւանդուած, այնու ամենայնիւ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս ժողովի մասին» (*Վ. Տեր-Մկրտչեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, Վաղարշապատ, 1908, էջ 132*):

Դեռեւ 1909 թվականին Բ. Կյուլեսերյանը վերապահումով է վերաբերվում այն ուսումնասիրողների կարծիքին, ովքեր Նախադրությունը համարում էին բոլորովին անվավեր հավելում եւ հետագա ընդմիջարկություն. «Որչափ ալ ակնյայտի ընդմիջարկութիւն մ'ըլլայ այս հատուածը... բոլորովին անհարազատ գրուած մը չը թուիր եւ ոչ ալ շատ յետիւն ժամանակի գործ մը: Հոն յիշատակուած անուններէն ոմանք կը յիշեցնեն 450ի Արտաշատու ժողովականներուն անունները» (*Բ. Վ. Կիւլեսերեան, Եղիշե, քննական ուսումնասիրութիւն, Վիեննա 1909, էջ 60-61 ծան.*):

Շարունակելի

Սկերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր

Հայ կնո՞ւնդ դասկերումն օսարագգի գրողների երկերում

Սկիզբը՝ էջ 7

Այն, ինչ միանշանակորեն ամոթալի ու մեծելի էր անցյալում, կարող է միանգամայն ընդունելի լինել մեր ժամանակներում: Իսկ այն, ինչ նորմալ է մի երկրում ու մշակութային միջավայրում, կարող է բացարձակապես մերժելի ու պարսավելի լինել մեկ այլ հասարակության մեջ եւ ճիշտ հակառակը: Վերջ ի վերջո, կյանքում ամեն բան փոփոխական է ու հարաբերական, ուստի եւ որեւէ երեւոյթի կամ իրողության շուրջ ծայրահեղ տեսակետներ արտահայտելը, ժամանակակից մարդու տեսանկյունով, այնքան էլ ճիշտ չէ: Ասվածը տվյալ դեպքում վերաբերում է հայ կնոջ կերպարին ու նրա նկարագրին:

Հավելեցեք, որ որքան էլ մենք խոսում ենք ժամանակակից հայ կնոջ ազատականացման մասին, դրա մեջ, որպես կանոն, բացասական իմաստ տեսնելով, միեւնոյն է, համեմատելով հայ կնոջն այլ ազգերի կանանց հետ, ակամայից համոզվում ենք, որ ազգային ավանդական բարքերը տակավին բավական խոր են նստած հայ կանանց մեծամասնության մեջ, իսկ լավ է դա թե վատ, առանձին քննարկման թեմա է: Վերջին հարցադրումը, հավանաբար, առնվազն տարօրինակ կթվա բազմաթիվ հայ ընթերցողներին, սակայն պետք է

մոռանալ մի կարեւոր ճշմարտության մասին. «Կույր» ավանդապատկանությունը եւ ծայրահեղ պահպանողականությունը կարող են սահուն կերպով հատել հետամնացության սահմանագիծը, իսկ «հետամնացություն» հասկացությունը չի կարող դրականորեն ընկալվել ու գնահատվել որեւէ քաղաքակիրթ մարդու կողմից, որն իրեն XXI դարի քաղաքացի է համարում:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅՈՒՆՈՒՄ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր.
2.9.2013 թ.
Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ